20 ՄԱՐՏ 1998 ՈՒՐԲԱԹ # 49 (1552)

ԱԶԳ

Azg
armenian daily

Կարեն Դեմիրճյանը նախընտրելի է Վրաստանի եւ Թուրքիայի համար

ԱՆԿԱՐԱ, 19 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ՝ Թուրքիայի վարչապետ Մեսութ Յըլմազի վերջերս Վրաստան կատարած այցի ընթացքում երկրի նախագահ էդուարդ Շեւարդնաձեի հետ ունեցած բանակցություններում խոսվել է Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ Վրաստանի հնարավոր միջնորդության մասին, տեղեկացրել է «Թրքիշ Դեյլի Նյուզը»: Նրանք կարծիք են հայտնել, որ Հ�հ նախագահի թեկնածուների մեջ Շեւարդնաձեի մտերիմ ընկեր Կարեն Դեմիրճյանն է, որ նախընտրելի թեկնածու է ինչպես Վրաստանի, այնպես էլ Թուրքիայի համար:

Երկրաշարժ Լեռնային Ղարաբաղում

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ՝ ՀՀ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության համաձայն, մարտի 19-ին, տեղական ժամանակով ժամը 9 անց 6 րոպեին ԼՂՀ տարածքում տեղի է ունեցել երկրաշարժ: Էպիկենտրոնում, որը գտնվում է Մարտակերտ քաղաքից 10 կմ հարավ, սոնրերկրյա ցնցման ուժգնությունը կազմել է 4 բալ: Երկրաշարժը զգացվել է նաեւ Գորիսում՝ 3 բալ ուժգնությամբ: Զոհեր եւ ավերածություններ չկան:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԸՀ-ն ամփոփեց նախնական արդյունքները

Խ. Բեգիրջյանը դժգոհ է օրենքից

ԱՐԱԲՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Երեկ, ԿԸՀ-ում կայացած նիստում ամփոփվեցին նախագահի արտահերթ ընտրության նախնական տվյալները, իսկ հետմիջօրեին ԿԸՀ-ի նախագահ Խաչատուր Բեգիրջյանը հրավիրեց մամուլի ասուլիս: Պրն Բեգիրջյանը նախընտրեց ասուլիսը սկսել հարցուպատասխանով, որի ընթացքում հնչած հարցին ի պատասխան, թե նախնական կալանքում գտնվողներն ինչու են զրկվում քվեարկելու իրավունքից, Բեգիրջյանը զարմանք հայտնեց, նշելով, որ ինչու չենք հարցնում, թե անկողնային հիվանդները, գործուղման մեջ, հանգստավայրում կամ այլ բնակավայրերում գտնվողներն ինչու են զրկվում քվեարկելու իրավունքից, որով ոտնահարվում է նրանց սահմանադրական իրավունքը, եւ անմիջապես վկայաբերեց օրենքի անկատարությունը, շեշտելով, որ ԿԸՀ-ն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք չունի, բայց կողմնակից լինելով օրենքի փոփոխությանը, փաստեց, որ օրենքը առավել դեմոկրատ դարձնելու անհրաժեշտություն է զգացվում: Անդրադառնալով խախտումների վերաբերյալ հարցերին եւ դիտորդական խմբերի կարծիքներին, նշեց, որ դիտորդական խմբերի եւ մեր մոտեցումները տարբեր են, «միգուցե մեր օրենքը չի համապատասխանում արեւմտյան չափանիշներին, բայց առայժմ մենք օրենքից դուրս չենք կարող գործել», ընդգծեց Բեգիրջյանը, տեղեկացնելով, որ ԿԸՀ ստացված 11 բողոք-դիմումներից 2-ով հարուցվել է դատական գործ դատախազությունում, իսկ մեկով համապատասխան նյութեր են պատրաստվում: Մարտի 17-ին ներկայացվել է եւս մեկ բողոք, որով հավանաբար կրկին գործ կհարուցվի:

Տես էջ 2

ԱՍՈՒԼԻՍ

Ռոբերտ Քոչարյան. Չէի ցանկանա ծրագրերիս իրականացումը փոխանցել ուրիշի

Իսկ հնգյակի հայտարարության առիթը... խուճապն էր

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Ռոբերտ Քոչարյանի երեկվա ասուլիսը նախընտրական արշավի ոլորտից չէր, այլ ներկայացնում էր ՀՀ նախագահի պաշտոնականաչ, վարչապետ Քոչարյանի վերաբերմունքը դիտորդների հետընտրական եւ «հնգյակ + 2»-ի «ընտրական» հայտարարություններին: Ընտրությունների ընթացքում ժողովրդի անժխտելի ակտիվությունը մարդկանց հավատի եւ դրական ակնկալիքների արտահայտություն համարելով, վարչապետը կարեւորեց նաեւ միջազգային դիտորդների մասնակցությունը ընտրական գործընթացներին, ասելով «մեր երկրում դեռեւս չկան ձեւավորված ավանդույթներ, եւ նրանց ներկայությունն ինչ-որ տեղ զսպող գործոն է», ասաց վարչապետը՝ «ինչխան շատ, այնքան լավ» դիտորդից հավաստիացնելով, որ ընտրությունների երկրորդ փուլը նույնպես կանցնի դիտորդների ծանրակշիռ խմբի մասնակցությամբ եւ, ըստ այդմ, առաջին փուլում «սպրդած» թերացումները կհաղթահարվեն երկրորդ փուլում: Հնգյակի հայտարարությունն, ըստ նրա, գործելակերպի լավագույն տարբերակը չէր թեկնածուների համար, հանգի փաստորեն հակահարոգչություն էր թեկնածուներից մեկի դեմ՝ դեռեւս ընթացող ընտրությունների պայմաններում, առավել եւս, որ ընտրությունների ընդհատումը ամենամեծ կՈ-ն կլիներ այդ ընթացքում:

ԿՀ մուտքագրված տարը դիմում-բողոքներն ուսումնասիրելով, դատախազությունն ընթացք է տվել միայն երեքին՝ քրեական գործեր հարուցելով խնդրո առարկա միջադեպերի առնչությամբ: Ասել է թե՝ խոշոր, զանգվածային խախտումներ չեն եղել, արձանագրեց վարչապետը՝ գոհունակություն հայտնելով, որ ընտրություններից հետո հասարակությունն, ըստ էության, «չկիսվեց, չբեւեռացավ», եւ հաջորդ օրն իրավիճակը հանդարտեցությունում հանգիստ էր: Դիտորդների հինգ խմբերի եզրակացություններում երեք ընդհանուր կետեր կան. թերություններ, խախտումներ եղել են, բայց վերջին հաշվով չեն ազդել ընտրությունների արդյունքների վրա, չարաշահումները տեղական ինքնագործունեության հետեւանք էին եւ կազմակերպված բնույթ չեն կրել: Վերջապես, խախտումներ կատարվել են տարբեր կողմերից, սակայն մեծամասամբ չափազանցվել են, այսինքն, ստուգումներով չեն հիմնավորվել:

Անձամբ վարչապետը համոզված է, որ «օրինազանցություններ, այո, եղել են եւ եղել են տարբեր թեկնածուների կողմից», սակայն եղել է նաեւ արջի ծառայություն իր «օգտին», չնայած նման գործերը բացառելու խնդրանքներին: Ինչ վերաբերում է Աջափնյակի աղմուկ հանած փաստին, որ չափազանց ակնհայտ, ըստ այդմ շատ կասկածելի է, հանգի շահարկվում էր իր անունը, ապա պրն Քոչարյանը մտադիր է անձամբ հետաքրքրություն ցուցաբերել գործի արդյունավետ ավարտին:

Տես էջ 2

Լոնդոնը պայթուցիկ նյութեր է տվել Ադրբեջանին

Մարտի 17-ին Իրանի «Իրնա» լրատվական գործակալությունը հայտնել է, թե Բրիտանիան ընդունել է Ադրբեջանի նկատմամբ պարտադրված ռազմական տեխնիկայի վերաբերյալ շրջափակման օրենքների խախտումը: Լոնդոնը Ադրբեջանին է տրամադրել ռազմական նպատակների համար օգտագործվող պայթուցիկ նյութեր՝ իբր նավթի արդյունահանման ոլորտում օգտագործելու նպատակով: Պատասխանելով Բրիտանիայի խորհրդարանի հարցումներին՝ արտաքին հարցերի գրասենյակի նախարար Դաֆ Հենդերսոնն ասել է, թե իրենք կշարունակեն հարգել Հայաստանի եւ Ադրբեջանի ռազմական շրջափակման ԵԱՀԿ-ի կողմից պարտադրված պայմանները՝ ավելացնելով, թե այս դեպքը բացառություն է:

«ԵՐԵՎԱՆ»

Ոչ թե 32 հազար, այլ 28 հազար դոլար

Նախագահական ընտրություններից չորս օր առաջ «Ազգը» տարածեց Արմենպրեսի թղթակցությունը ԳԱԱ փիլիսոփայության եւ իրավունքի ինստիտուտի տնօրեն, սոցիոլոգների ասոցիացիայի նախագահ, ՄԱԿ-ի ազգային փորձագետ Գեւորգ Պողոսյանի կանխատեսումների մասին: Գոհունակությամբ արձանագրենք, որ հայտնի սոցիոլոգի այդ դիտարկումները ընդհանուր առմամբ իրականացան: Նա կռահել էր ընտրողների 65 տոկոսի մասնակցություն ընտրություններին եւ ԿԸՀ-ի երեկվա տվյալներով այդ թիվը կազմել է դրան մոտ 63,91 տոկոս: Գեւորգ Պողոսյանը գտնում էր, որ երեք թեկնածուները կստանան ձայների 80-90 տոկոսը, իսկ ԿԸՀ նույն տվյալներով առաջին երեք թեկնածուները իսկապես հավաքել են 81,66 տոկոս: Սոցիոլոգը նախատեսել էր ընտրությունների երկրորդ փուլ, որտեղ մրցակցելու են Կ. Դեմիրճյանը ե Ռ. Քոչարյանը:

Գեւորգ Պողոսյանը նախատեսել էր նաեւ, որ 8 թեկնածուներ չեն կարող 0,7 տոկոսից ավել ձայն հավաքել: Մինչդեռ թեկնածուներից 7-ն էին, որ չկարողացան ոչ միայն 0,7 տոկոս հավաքել, այլեւ միասնաբար ընդամենը 2,2 տոկոս ի մի բերել: Պողոսյանը թերագնահատել էր Պարույր Հայրիկյանի հնարավորությունները, որն անցավ 5 տոկոսի սահմանը՝ 5,4 տոկոս, եւ, մյուս կողմից, գերագնահատել էր Ա. Բլեյանի, Յ. Մկրտչյանի, Ա. Սարգսյանի, Հ. Խաչատրյանի, Վ. Խաչատրյանի, Ա. Գեղամյանի եւ Դ. Շահնազարյանի շանսերը:

Գ. Պողոսյանն այդ առաստաղերների մասին ասել էր, որ նրանց մուծած 4-հազարական դոլար գումարը կկազմի 32 հազար, որով առաջարկել էր Հանրապետության հրապարակում թեկնածուների խաբված հույսերի հուշարձան կառուցել: ԿԸՀ-ի երեկվա արդյունքներից պարզվում է, որ այդ հուշարձանը պետք է ավելի համեստ կառուցել, քանզի ընդամենը 25 հազար է մուտքագրվելու պետբյուջե:

Ընթացիկ տարում Հայաստանի արտաքին պարտքը կկազմի 822 մլն դոլար

ԵՐԵՎԱՆ՝ 19 ՄԱՐՏ, ՏՆՏԲ՝ 1998 թ. ընթացքում Հայաստանի արտաքին պետական պարտքը, առանց հաշվի առնելու պետձեռնարկությունների արտաքին պարտքերը, կաճի 128,59 մլն ԱՄՆ դոլարով եւ կկազմի 822,22 մլն դոլար: Ընդ որում արտաքին պարտքի կառուցվածքում վարկերի հիմնական մասը (44,48 տոկոս), բաժին է ընկնում միջազգային ֆինանսական կազմակերպություններին:

1997 թ. վերջի դրությամբ Հայաստանի հիմնական վարկատուն Համաշխարհային բանկն է, որը մոտ 202 մլն դոլարի վարկ է տրամադրել, եւ Ռուսաստանը 116,913 մլն դոլար: Տարվա վերջին վճարման ենթակա պարտքը կազմեց 32,38 մլն դոլար, որից 17,83 մլն դոլարը հիմնական պարտքի, իսկ 14,54 մլն դոլարը տոկոսների գծով: 1998 թ. արտաքին պարտքի սպասարկման ծավալները կաճեն մինչեւ 36,01 մլն դոլար: 1998 թ. վերջին արտաքին պարտքի հարաբերակցությունը համախառն ներքին արդյունքին կկազմի 47,4 տոկոս 1997 թ. 44,91 տոկոսի դիմաց: Միեւնույն ժամանակ արտաքին պարտքի հարաբերակցությունը արտահանության կկազմի 283,62 տոկոս՝ 1997 թ. 280,25 տոկոսի եւ 1996 թ. 191,1 տոկոսի դիմաց: Վարկային պորտֆելում կավելանա արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը, որն ընթացիկ տարում կկազմի 46,01 տոկոս 1997 թ. 43,02 տոկոսի, եւ 1996 թ. 38,73 տոկոսի դիմաց: Սկսած 1999 թ. արտաքին պարտքի սպասարկման ծավալների կտրուկ աճ է սպասվում: Մինչեւ 2004 թ. այդ ցուցանիշը կտատանվի տարեկան 55-70 մլն դոլարի սահմաններում, ինչը որոշ խոշոր պարտքերի արտոնյալ ժամկետի ավարտով է պայմանավորված:

Ռուս դեսպանը հերքում է Բաքվի նոր հերյուրանքը

ԲԱՔՈՒ, 19 ՄԱՐՏ, ՏՆՏԲ՝ Ադրբեջանում ՌԴ դեսպան Ալեքսանդր Բլոխինը հերքել է ՁԼՄ հաղորդագրությունները, թե նախօրեին Բորիս Ելցինին Հեյդար Ալիեւի ուղարկած նամակում մտահոգություն է արտահայտված ՀՀ ռուսական սպառազինություններին, ներառյալ C-300 համալիրներ, նոր մասակարարման ծրագրերի շուրջ: Ինչ վերաբերում է 1994-1997 թթ. Հայաստան ռուսական սպառազինությունների մատակարարման գործի հետաքննությանը, ապա, նրա խոսքերով, դա ժամանակի հարց է: Դատախազությունը դեռեւս չի ավարտել հետաքննությունը, որի ավարտից հետո արդյունքները կփոխանցվեն համապատասխան եռակողմ հանձնաժողովին, ասել է Բլոխինը:

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Ամերիկայի հայկական համագումարը մեղադրեց ԵԱՀԿ-ին կողմնակալության եւ ադրբեջանամետության մեջ

19 ՄԱՐՏ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»՝ Ինչպե՞ս են արձագանքում հայկական լոբբիական խմբերը ԵԱՀԿ-ի եզրակացությանը Հայաստանի նախագահական ընտրությունների առաջին փուլի կապակցությամբ: Երեկ Ամերիկայի հայկական համագումարը մեղադրեց ԵԱՀԿ-ի դիտորդական առաքելությանը՝ կողմնակալության մեջ: Ըստ ԱԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Վան Գրիգորյանի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում ադրբեջանամետ կեցվածքը թույլ չտվեց ԵԱՀԿ-ին անաչառ գնահատական տալ Հայաստանի նախագահական ընտրություններին: ԵԱՀԿ-ի եզրակացությունը, ըստ Ամերիկայի հայկական համագումարի, չի համապատասխանում թե՛ մյուս արեւմտյան դիտորդների գնահատականին եւ թե՛ իրականությանը:

Այսօր Ռոյթերը, Ֆրանսպրեսը, AP-ն, DPA-ն, ամերիկյան «Նյու Յորք թայմսը» եւ մի շարք եվրոպական թերթեր փորձում են կանխատեսել ընտրարշավի հետագա ընթացքը: Արեւմտյան լրատվամիջոցները դժվար ընտրություն են կանխատեսում երկրորդ փուլ դուրս եկած թեկնածուների միջեւ: Ներկայացվում են առաջին փուլում հաղթանակ տարած թեկնածուների քաղաքական դիմանկարները: Ռոբերտ Քոչարյանը բնութագրվում է իբրեւ երիտասարդ, եռանդուն եւ հմուտ վարչարար, դարաբաղյան պատերազմի հերոս, իսկ Կարեն Դեմիրճյանը՝ իբրեւ փորձառու, կարող կառավարիչ, իբրեւ Հայաստանի կոմկուսի նախկին ղեկավար եւ հետխորհրդային շրջանի հաջողակ գործարար: Արեւմտյան մամուլը փորձում է արդեն վերլուծել, թե ինչպես կվերախմբավորվեն պարտված թեկնածուների ընտրազանգվածները հոգուս երկրորդ փուլ դուրս եկած թեկնածուների: Արեւմտյան լրատվամիջոցներն իրենց կանխատեսումները գլխավորապես հիմնում են հայ փորձագետների եւ երեւանում աշխատող արեւմտյան դիվանագետների վերլուծությունների վրա: Սակայն որոշ թերթեր կարդալիս երբեմն այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե Հայաստանից անտեղյակ արեւմտյան լրագրողն իր փորձագիտական խորհուրդները ստացել է Կոմայգու սիրողական վերլուծաբաններից: Օրինակ, գերմանական «Զյուդդոյչե ցայտունգի» թղթակից Վոլֆգանգ Թյոդոլն այսօր հայտնում է, թե Հայաստանում մինչ այժմ ներդրում կատարելու առաջարկ է արել միայն մի սփյուռահայ մեծահարուստ: Այն էլ ոչ այնքան ազնիվ շարժառիթներով: Թղթակիցն իր գերմանացի ընթերցողներին հայտնում է, թե իբր ամերիկացի միլիարդատեր Քըրք Քըրքորյանն առաջարկել է 100 մլն դոլար ներդնել Հայաստանում՝ պայմանով, որ իրեն Հայաստանի նախագահ ընտրեն: Սակայն հայերը, ըստ «Զյուդդոյչե ցայտունգի» թղթակցի, իբր հաղթավարի կերպով մերժել են ամերիկահայ մեծահարուստի առաջարկը:

digitised by A.R.A.R.@

ԱՍՈՒԼԻՍ

Ռոբերտ Քոչարյան. Չէի ցանկանա ծրագրերիս իրականացումը փոխանցել ուրիշի

Սկիզբը էջ 1

ԵԱՀԿ դիտորդների հայտարարության մեջ արձանագրված վեց նկատառումներից առնվազն երեքին վարչապետը համաձայն չէ, եւ համատեղ ճնշարկման ընթացքում դիտորդներն ընդունել են, որ վերջիններս անհամոզիչ են: Նախ, իրականությանը չի համապատասխանում զանգվածային լրատվության միջոցների անհամաչափ օգտագործման «մեղադրանքը». իբրեւ պետության ղեկավար իր ունեցած առավելությունն ինչ-որ չափով չեզոքացնելու համար վարչապետը «թերակատարել է» անվճար եթերաժամերից օգտվելու «պլանը», ռադիոյի անվճար եթերաժամերից չի օգտվել, «Լրաբերից» օգտագործել է 11,5 րոպե, մինչ Վազգեն Մանուկյանին բաժին է ընկել 19 րոպե, Կարեն Դեմիրճյանին 12,5 րոպե: Մերժելի է նաեւ պետական ռեսուրսների հավասար ընտրակաբառ բաժանելու վարկածը: Նավթի «բաշխման» միակ արձանագրված փաստը ոչ թե պետական, այլ «մասնավոր» նախաձեռնության արդյունք էր (թերեւս, «արջի ծառայության» ոլորտից- Լ.Պ.):

«Հնգյակի հայտարարությունն ինձ համար անհասկանալի է, եւ տհաճ վտանգավոր ավանդույթի սկիզբ կարող է դառնալ», նշեց վարչապետը համոզմունք հայտնելով, որ օրի նախախտումների հեղինակների «պատիժը» բոլոր դեպքերում նախադրյալներ կստեղծի երկրորդ փուլի մարդության համար: Ավելի ուշ, պատասխանելով հարցերին, որն Քոչարյանը հայտարարության շարժառիթների հետաքրքիր վարկած առաջարկեց: Հայտարարության ջղագրգիռ շեշտադրումների պատճառը, թերեւս այն էր, որ, քվեարկելուց առաջ, պատասխանելով երկրորդ փուլի հնարավորության վերաբերյալ լրագրողի հարցին, ինքն ասել է. «Համոզվա՞ծ եք, որ երկրորդ փուլ կլինի», ինչը «Լրաբերով» այլ գունավորում է ստացել խուճապի պատճառ դառնալով եւ մեկնաբանվելով այսպես. վարչապետը վստահ է, որ հաղթելու է առաջին փուլում եւ գնացել է հանգստանալու: Մինչդեռ ասվածը կատակ էր, քանզի այդ պահին լուրջ-լուրջ բաներ ասելու տրամադրություն չկար:

Մեր հարցին, չընտրվելու դեպքում Հայաստանից հեռանալու եւ «այլ աշխատանքով զբաղվելու» մտադրությունը լո՞ւրջ էր, թե՞, «ավանդույթի» համաձայն դարձյալ կատակ, վարչապետը հումորով, բայց լուրջ պատասխանեց. «Հիմա ինձ շանս եք տալիս, որ ասեմ, թե կատակե՞լ եմ: Ոչ, լուրջ եմ ասել»:

Հարցազրույցից պարզվեց նաեւ, որ վարչապետն իր թիմի կառավարության անդամների նկատմամբ պարտավորվածություններ չունի, հաղթելու դեպքում իշխանության վերին էշելոններում փոփոխություններ նախատեսում է, բայց ոչ առաջիկա երկու շաբաթում, «կոալիցիայի» գաղափարին դեմ չէ, բայց առաջնորդվելու է առաջին հերթին պրոֆեսիոնալիզմի չափանիշներով: Սփյուռքի հետ փոխհարաբերությունների առումով վստահ է. Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է, եւ սփյուռքի մասնակցությամբ էապես կխթանվի Հայաստանի զարգացումը տնտեսության (բիզնեսի), արտաքին քաղաքականության, մշակույթի եւ կրթության բնագավառում (վերջին դեպքում նաեւ հակառակ սփյուռքին նպաստ բերելու առումով): Երկքաղաքացիության ընդունումն, ըստ վարչապետի, անհրաժեշտություն է, հայաստանյան ընտրություններին սփյուռքահայության մասնակցությունը՝ պակաս ցանկալի:

Վարչապետը չհամաձայնեց «նոմենկլատուրայի ներկայացուցիչը» լինելու վարկածին նշելով, որ այսօր իր «կուսակցական շրջապատը» ժխտում է այդ տարբերակը. «Շուտով ինքներդ կտեսնեք, թե ում կողքին փորձված նոմենկլատուրային դեմքեր կլինեն, ում մոտ չեն լինի»: Գնահատելով իր վարչապետության մեկ տարին, Ռոբերտ Քոչարյանն ասաց. «Տարին շատ լարված էր, խնդիրները չափազանց շատ էին, սակայն՝ լուծելի: Շատ բան արդեն արված է բոլոր ուղղություններով, եւ ես շատ կուզեի, եթե սխրված լինեի ծրագրերիս իրականացումը փոխանցել մեկ ուրիշի»:

ՄՈՍԿՎԱ

Ավարտվո՞ւմ է հայոց պատմության սիրողական շրջանը

Մի տարի առաջ, հանդիպելով ակադեմիկոս Աբել Աղանբեգյանի հետ, ես նրան հարցրի՝ որեւէ փիսա կա՞ նրա եւ Հայաստանի ղեկավարության միջեւ: Ինչքան էլ տարօրինակ է, ոչ մի, պատասխանեց անվանի տնտեսագետ գիտնականը, ինձ հետ խորհրդակցում, համագործակցում են բոլոր նախկին միութենական հանրապետությունների ներկայացուցիչները, այդ թվում նաեւ ադրբեջանցիները, իսկ հայրենակիցներս լռում են: Չմտածեմ, ավելացրեց զրուցակիցս, թե ես վիրավորված եմ նման «անտարբերությունից», պարզապես դա ինձ անհասկանալի է...

Քաղաքական ասպարեզից Լեւոն Տեր-Պետրոսյանի հեռացումով ուզում ես հավատալ, որ եզրափակվեց հայոց պատմության դիլետանտական (սիրողական) շրջանը: Անշուշտ խոհեմ բան չէ մոսկովյան հեռավորությունից եւ զգացմունքային դիրքերից արժեքավորել պետական այրի գործունեության արդյունքները: Բայց դա էլ անխուսափելի է, քանզի հատկապես վերջին մի քանի տարում ծարահայալ տուն-տեղ թողած եւ Մոսկվայում հանգրվանած բազմահազար հայաստանցիներից միայն նախատական (չասենք հայհոյական) արտահայտություններ ենք լսել նախկին նախագահի հասցեին՝ որպես «սպիտակ ցեղասպանության» հեղինակի: Դաժան է, իրոք զգացմունքային, բայց սա է եղել նրա ընդհանրացված բնութագիրը: Եվ այս ֆոնի վրա Լեւոն Տեր-Պետրոսյանի «պատմականության» պահը փաստագրականից բացի այստեղ կորցնում է նշանակությունը: Ավելին, հիշյալ հայաստանցիները ավելի շուտ պատմական են համարում նրա անկման իրադարձությունը, եւ հիրավի պատմական անձնավորություն՝ դրա կազմակերպիչ Ռոբերտ Քոչարյանին:

Այստեղից էլ մոսկվայաբնակ հայերի հսկայական հետաքրքրությունը նախագահական ընտրությունների նկատմամբ: Առանց չափազանցության կարելի է ասել, որ նրանք հայաստանաբնակներին հավասար ադրումներ ունեցան: Բանն այն է, որ հազար ու մի թելերով կապված լինելով հայրենիքի հետ, նրանք չեն հաշտվում նորահայաստանյան սփյուռք հորջորջվելու մտքին: Հուսով են, որ Տեր-Պետրոսյանով պատմության գիրկը կանցնի նաեւ անբարյացակամությունն ու անվստահությունը իրենց նկատմամբ, եւ բարեհաջ վերաբերմունքի դեպքում տեղի հայությունը կարող է լիարժեք օգնություն ցույց տալ Հայաստանին:

Երեւանից տրվող հեռուստահաղորդումները Մոսկվայի հայերի մեջ տխուր խոհեր էին առաջացնում. սմքած, անխնամ, վատ հագնված հայաստանցիները հիշեցնում էին հետամնաց արեւելյան երկրի բնակիչների: Ժողովրդի ծոցից դուրս եկած «զավակները» իրենք պարարտացան, իրենց սնուցողին թողնելով մերկ ու անօգնական: Հոգնել է, շատ է հոգնել մեր ժողովուրդը կրստեր գիտաշխատողների ադաչնորհ գիտափորձերից: Նախնյաց երկրում փոփոխությունների ակնկալիքների առաջին երաշխիքը կլինի այն հարցի լուծումը, թե նոր նախագահը ինչ մարդկանցով կերջապատի իրեն:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Առաջին փուլը Հայաստանի ողջ պատմության մեջ ամենաբացն ու թափանցիկն էր»

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏ, ՍՆՊՐ Այսօր ՀՀ տեղեկատվության եւ գրահրատարակչության վարչության ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանը մամուլի համար հանդես է եկել հայտարարությամբ:

Հայտարարության մեջ մասնավորապես նշվում է, որ մարտի 16-ի արտահերթ նախագահական ընտրությունների առաջին փուլը Հայաստանի ողջ պատմության մեջ ամենաբացն ու թափանցիկն էր:

Միաժամանակ, փաստաթղթում ափսոսանք է հայտնվում դրանց ընթացքում տեղ գտած խախտումների առիթով: Դրանց մեղավորները, անկախ, թե որ թեկնածուի կողմնակիցներն են, պետք է պատիժ կրեն:

Հայտարարության մեջ նշվում է նաեւ ԵԱՀԿ, Եվրախորհրդի եւ ԱՊՀ դիտորդների նախօրեին տարածած ընտրությունների առաջին փուլի մասին հայտարարությունների հակասականությունը: Նա հատկապես նշում է հայկական նախընտրական արշավի ընթացքում ՁԼՄ-ների կողմնակալության մասին որոշ միջազգային դիտորդների տնդումները: Հովհաննիսյանի խոսքերով, դա չի համապատասխանում իրականությանը, չնայած ՁԼՄ-ների որոշ թերություններ շտկելու կարիք կա:

Հայտարարության մեջ հույս է հայտնվում, որ առաջին փուլում տեղ գտած խախտումները երկրորդում չեն կրկնվի, ինչով եւս մեկ անգամ կապացուցվի Ժողովրդավարությանը ՀՀ կողմնակից լինելը: Փաստաթղթում ցանկություն է հայտնվում, որ դիտորդները, ովքեր երկրորդ փուլում մոնիտորինգ են իրականացնելու, կհասկանան ընթացիկ խախտումների եւ պարզ սադրիչ գործողությունների տարբերությունը, որոնք նպատակ են հետապնդում վարկաբեկել Հայաստանում արտահերթ նախագահական ընտրությունները:

Ինչո՞ւ Նոյեմբերյանում քվեարկեցին Դեմիրճյանի օգտին

19 ՄԱՐՏ, «ԵՐԵՎԱՆ»: Մարտի 16-ին Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի երկու տեղամասերում քվեարկության արդյունքներով նախագահության թեկնածու Կարեն Դեմիրճյանին տրվեց 1357 ձայն, իսկ Ռոբերտ Քոչարյանին՝ 686: Դեմիրճյանի օգտին կրկնակի ավելի քվեները բացատրվում են նրանով, որ նախընտրական արշավի ժամանակ, ի տարբերություն վարչապետի, նա եղավ այդ տարածաշրջանում: Բացի այդ, քվեարկության արդյունքը կանխորոշեց նաեւ այն հանգամանքը, որ դեռեւս բնակչությանը չի հատկացվել 1997 թ. հունիսի 18-ի երկրաշարժից վթարային դարձած մասնավոր բնակարանների վերականգնման համար նախատեսված 100 մլն դրամի վարկը:

ԿԸՀ-ն ամփոփեց նախնական արդյունքները

Սկիզբը էջ 1

ԿԸՀ-ի իրավաբանական բաժնի պետ Պատվական Հովակիմյանը տեղեկացրեց, որ ԻՄ-ի, ԱԺՄ-ի եւ Կարեն Դեմիրճյանի նախընտրական շտաբներից եւս կան բողոք-դիտումներ, սակայն նրանց մի մասը ի գիտություն է տրված, որոնց վերաբերյալ համեմատականներ են անցկացվել բոլոր մարզային եւ Երեւանի քաղաքային հանձնաժողովների հետ: Պրն Հովակիմյանը ընդգծեց, որ այդ բողոքները հանձնաժողովի անդամների կողմից ոչ թե անմիջապես պետք է ներկայացվեին ԿԸՀ, այլ արձանագրությունների ներքեւում տվեր հատուկ կարծիք: Նա միաժամանակ շեշտեց, որ ԿԸՀ-ի եւ մարզային ընտրական հանձնաժողովների կողմից առավելագույնս պետք է արվի, որպեսզի բողոքների վերջնական գնահատականը տվի եւ արժանվույները ամփոփվեն վերջնական արձանագրության մեջ: Եվ շեշտեց, որ ներկայումս բողոք-դիմումների եւ հստակ կարծիքների հիման վրա մարզային նաեւ քաղաքային ընտրական հանձնաժողովները ԿԸՀ-ի 4 հանձնաժողովի անդամի եւ երկու վստահված անձանց հետ կատարում են ստուգումներ: Ստահոգություն հայտնեց, որ այս տարի ԿԸՀ-ն ականատես է եղել կեղծ ահազանգերի ինստիտուտների գործողությունների, այսինքն ԿԸՀ անդամները ահազանգով մեկնել են նշված վայր, բայց պարզվել է, որ ընտրությունները նորմալ են ընթանում: Հետագայում նույն ընտրատեղամասի վրա կրկին նույնատիպ զանգեր են ստացվել: Ըստ ԿԸՀ-ի իրավաբանի, ձեւավորվում է արջի ծառայություն մատուցելու հասկացություն, որը ստվեր է գցում ընտրությունների վրա:

ԿԸՀ-ի նախագահը խոսելով կրտոնների համակարգից, այն ավելորդություն համարեց, նշելով, որ ամենայնի, կրտոնը վերահսկողությունն ապահովելու համար էր, սակայն իրականում միայն խոչընդոտում է, քանի որ «ընտրությունների արդյունքը կարող էինք իմանալ լուսաբացին կամ ավելի շուտ»: Եվ մեղադրելով հեղինակին ասվեց, որ հաշվի չի առնվել, որ ընդամենը տասը հոգով, եւ առնվազն երկու անգամ պետք է հաշվարկվեր: «Կրտոնների թվականակը համընկնո՞ւմ է քվեաթերթիկների թվականակին», հարցին ի պատասխան պրն Բեգիրջանը նշեց, որ տարբեր տեղերում տարբեր են, բայց մարզային ընտրական հանձնաժողովները կարող են ստուգումներ կազմակերպել եւ ճշտումներ կատարել, քանի որ տեխնիկական սխալները կարող են հանգեցնել անճշտությունների, որոնք գումարելով մեծ թիվ կկազմեն: «Թեպետ ներկայումս երկրորդ եւ երրորդ տեղերի միջեւ բավականին մեծ ձայների տարբերություններ կան, բայց չէր բացառվում, որ մոտ լինելու դեպքում անճշտությունները մեծ ազդեցություն թողնեին»: Պրն Բեգիրջանը նաեւ նկատեց, որ հարուցված այն գործերը, որոնցում մեծ քանակությամբ քվեաթերթիկներ են փորձել քվեատուփը գցել, այդ անձինք ենթարկվելու են քրեական պատասխանատվության: Բայց դա չի նշանակում, թե ազդելու է ընտրությունների արդյունքների վրա: Անդրադառնալով նախագահի թեկնածուների հայտարարությանը, նշեց, որ այն բոլոր դեպքերում պետք է իրավական հիմք ունենա:

Մարտի 18-ի նախագահի արտահերթ ընտրության նախնական արդյունքների ամփոփիչ տվյալներով քվեարկությանը մասնակցել են ընդամենը 1.458.135 մարդ (63,97 տոկոս), ըստ որի ձայները բաշխվել են հետեւյալ հերթականությամբ.

1. Ռոբերտ Քոչարյան	545843 ձայն	(38,82 տոկոս)
2. Կարեն Դեմիրճյան	430530 ձայն	(30,62 տոկոս)
3. Վազգեն Մանուկյան	171834	(12,22)
4. Սերգեյ Բաղալյան	154997	(11,02)
5. Պարույր Հայրիկյան	76009	(5,41)
6. Դավիթ Շահնազարյան	6891	(0,49)
7. Արտաշես Գեղամյան	6308	(0,45)
8. Վիգեն Խաչատրյան	4016	(0,29)
9. Հրանտ Խաչատրյան	2943	(0,21)
10. Արամ Սարգսյան	2715	(0,19)
11. Յուրի Մկրտչյան	2511	(0,18)
12. Ատոմ Բլեյան	1563	(0,11)

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh համակարգչային ծառայությունը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՂՂԱԳԻԾ

Սեյրան Ավագյանն ընդգծեց, որ իրենց շտաբը ամենասկզբից հավատարիմ է մնացել դրական ֆարազչությունը ծավալելու սկզբունքին եւ չնայած Ռոբերտ Քոչարյանի թեկնածու առաջադրվելը կուսակցությունը համարել է Սահմանադրության խախտում, սակայն այդ հանգամանքը չի շահարկվել ֆարազարշավի ողջ ընթացքում: Նույն կերպ «ֆարազչական բլոկում» չեն ընդգրկվել «Արարատի դեմքերը, որոնք դուք բաց ծանոթ եք», ինչպես նաեւ «Դեմիրճյան անձնավորության հետ կապված երեւույթը»:

2. Այս ու այնտեղ նկատվել են քաղաքական «հեղինակություններ» գլխավորած 25-50 հոգիանոց խմբերի ներխուժումներ ընտրական տեղամասեր: Այդ խմբերը ստեղծել են ահաբեկչության եւ սարսափի մթնոլորտ, կատարել բռնարարքներ, ծեծել թեկնածուների վստահված անձանց, երբեմն նաեւ հանձնաժողովի անդամներին, խուլիգանական այլ գործողություններով խաթարել ընտրական գործընթացը, բռնի կերպով քվեաթերթիկների տրցակներ են լցրել քվեատուփերի մեջ:

3. Նկատվել են տեղամասեր, որտեղից հատկացված սենյակներից եւ չեն կանխել խուլիգանությունը, ծեծուջարդը, ահաբեկումներն ու այլ օրինախախտումները:

Ասուլիսն անցկացողները ընդգծում էին, թե իրենց գնահատմամբ, բոլոր փաստերը վկայում են, որ «ընտրություններն անցել են ոչ ազատ եւ ոչ արդար»: Պատասխանելով լրագրողների հարցերին, պրն Ավագյանն ու Ջանոյանը խուսափում էին հստակորեն ասել, թե իրենց մատնանշած օրինախախտումները նախագահի ո՞ր թեկնածուի օգտին են կատարվել: Սակայն այդ առթիվ լրագրողներ

ԱԺՄ

Սեյրան Ավագյան. «Ընտրությունները ոչ ազատ եւ ոչ արդար էին»

Մարտի 19-ին ԱԺՄ գրասենյակում մամուլի հետընտրական առաջին ասուլիսն անցկացրին ՀՀ նախագահի թեկնածու Վազգեն Մանուկյանի նախընտրական շտաբի պետ, ԱԺ պատգամավոր Սեյրան Ավագյանը եւ շտաբի իրավաբանական ծառայության ղեկավար Տիգրան Ջանոյանը:

Այսինքն, նախընտրական շտաբը հակաֆարազչություն չի ծավալել ոչ մեկի դեմ:

Անդրադառնալով ընտրությունների առաջին փուլին, պրն Ավագյանը ասաց, թե ուզում է կանգ առնել «մարտի 16-ի մթնոլորտի վրա» եւ ներկայացնել «այն դատկերը, ինչ կա ընտրություններից հետո»: Պրն Ավագյանն ընդգծեց, որ տեղամասերից ստացվող բոլոր ահազանգերը իրենք ստուգել են նախ վերադաս ընտրական հանձնաժողովների միջոցով, ապա եւ տեղերը շտաբի անդամներին եւ լրագրողներին ուղարկելով: Իրենց տղավորությամբ, 1996 թ. ընտրությունների ժամանակ «օրվա սկզբում համեմատաբար ավելի հանդարտ վիճակ էր տիրում, կեղծիքներն ու բռնությունները սկսվեցին օրվա երկրորդ կեսից, իսկ այս անգամ «լարված վիճակ էր տիրում հենց օրվա սկզբից»:

Այնուհետեւ պրն Ավագյանը թվարկեց իրենց արձանագրած խախտումների, ընտրական գործընթացի խաթարումների եւ նույնիսկ հանցագործությունների բավական շատ փաստեր, նշելով, որ դրանցից 46-ի վերաբերյալ զանգատներ են ուղղվել մարզային ընտրական հանձնաժողովներին, 30-ի վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, 50 փաստի մասին հայտնվել է հանրապետության դատախազությանը:

Արձանագրված իրավախախտումները կարող են բաժանվել մի քանի խմբի.

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովների որոշ նախագահներ ընտրությանը նախորդող գիշերը, քվեաթերթիկները վստահված անձանց կողմից ստորագրելուց եւ նրանց ցրելուց հետո, դուրս են բերել որոշակի թվով այդպիսի քվեաթերթիկներ եւ տվել թեկնածուներից մեկի կողմնակիցներին, իսկ բուն ընտրության պահին նդատել են, որ արդեն իսկ համադատասխան նշում կրող այդպիսի քվեաթերթիկները հայտնվեն քվեատուփերում:

2. Այս ու այնտեղ նկատվել են քաղաքական «հեղինակություններ» գլխավորած 25-50 հոգիանոց խմբերի ներխուժումներ ընտրական տեղամասեր: Այդ խմբերը ստեղծել են ահաբեկչության եւ սարսափի մթնոլորտ, կատարել բռնարարքներ, ծեծել թեկնածուների վստահված անձանց, երբեմն նաեւ հանձնաժողովի անդամներին, խուլիգանական այլ գործողություններով խաթարել ընտրական գործընթացը, բռնի կերպով քվեաթերթիկների տրցակներ են լցրել քվեատուփերի մեջ:

3. Նկատվել են տեղամասեր, որտեղից հատկացված սենյակներից եւ չեն կանխել խուլիգանությունը, ծեծուջարդը, ահաբեկումներն ու այլ օրինախախտումները:

Ասուլիսի ընթացքում բաժանված հատուկ տեղեկանքում մի քանի անգամ ընդգծված է, որ դրանք եղել են Ռոբերտ Քոչարյանի օգտին: Նույն տեղեկանքում նշված են կոնկրետ տեղամասերը, իրավախախտում կատարած հանձնաժողովների նախագահների կամ անդամների ազգանունները, շատ դեպքերում խուլիգանություն եւ ահաբեկչություն թույլ տված քաղաքական «հեղինակությունների» անունները եւ մականունները:

Իբրեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իբրեւ մարդ եւ լրագրող անձամբ վրդովված եմ ասուլիսի ընթացքում իմ լսած փաստերից: Եթե այդ ամենը ճիշտ է, ինչը, ի վերջո, դատարանը եւ դեռեւ է դատարանի մատնիները, առայժմ հրադարակով դահանջում եմ խստագույնս դատվել կատարողներին: Չի կարելի թույլ տալ, որ որոշ քաղաքացիներ լկտիաբար բռնաբարեն ժողովրդի կամքը եւ իրենց ընտրությունը դատարդեն մեզ, անվանարկեն մեր երկիրը միջազգային հանրության աչքում: Հայաստանը քաղաքակիրթ երկիր է եւ «գողական» բարքերը չդետք է թափանցեն քաղաքականության դորտ, մանավանդ հանդգված եմ, որ նախագահի թեկնածուներից ոչ մեկը, առավել եւս Ռոբերտ Քոչարյանը այդդիսի «աջի ծառայության» կարիք ամենեւին չունի եւ նշված փաստերը, եթե նույնիսկ իր օգտին կատարված չլինեին, վարկաբեկում են հենց իրեն՝ իբրեւ վարչապետի, որը չի կարողացել անհրաժեշտ կարգուկանոն ապահովել ընտրությունների ընթացքում:

Ասուլիսի ժամանակ բաժանվեց նաեւ ԿԸՀ-ի անդամ Վովա Հախվերդյանի «հատուկ կարծիքը», որը նա ներկայացրել էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ հրաժարվելով վերջնական արձանագրությունը ստորագրելուց, քանզի գտնում է, թե ընտրությունների առաջին փուլը անցել է ոչ ազատ եւ ոչ արդար:

ՈՍԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախագահական ընտրությունների նախօրյակին Երեւանում նվազեց մեծածախ առեւտուրը

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեւանի սննդամթերքի մեծածախ շուկաներից ստացված տվյալների համաձայն, փետրվարի կեսից մինչեւ մարտի 16-ի նախագահական ընտրությունների ժամանակամիջոցում նկատվել է սննդի, ծխախոտի եւ ալկոհոլային խմիչքների մեծածախ առեւտրի նվազում: Մարտի 16-ից հետո սննդի առեւտրի ոլորտում վիճակն սկսել է վերականգնվել:

Ըստ շուկայի առեւտրականներից ստացված տեղեկությունների, հիշյալ ժամանակահատվածում առեւտրականները խուսափում էին գնել մեծ խմբաքանակի ապրանքներ, որի հետեւանքով մեծածախ առեւտրի ծավալները նվազել էին երկուսից երեք անգամ: Որոշ դատճառ նշվում էր առեւտրականների կասկածները գների կայունության հետագա դահդանման վերաբերյալ:

Մարտի 16-ից հետո անցած երկու օրերի ընթացքում մոտ երկու անգամ ավելացել են սննդամթերքների մեծածախ առեւտրի ծավալները, սակայն ծխախոտի եւ ալկոհոլային խմիչքների բնագավառում դասիվությունը շարունակում է մնալ նույն մակարդակի վրա: Մասնագետների գնահատմամբ, հնարավոր է, որ դա կշարունակվի մինչեւ մարտի 30-ը:

Հայաստանի արտահերթ նախագահական ընտրությունները էականորեն չազդեցին դրամի փոխարժեքի եւ բանկարանների գների վրա: Դիտվել է միայն դեպական կարճաժամկետ դարտատոմսերի եկամտաբերության նշանակալի աճ:

ՃԵԴԱԳՐՈՒՅՑ

«Ամենաբացասականը ներկայիս օրենքն է»

Ասում է եվրոպացի փորձագետը, որը Երեւանում ամուսնացավ իր սիրած կնոջ հետ

Բեռնար Օուենը, որոնց Եվրախորհրդի փորձագետ, ներկա է եղել աշխարհի տասնյակ երկրների նախագահական եւ խորհրդարանական ընտրություններին: Նա Հայաստանում է նախագահական ընտրությունների կապակցությամբ: Ներկայացնում ենք հարցազրույց Ֆրանսիացի հայտնի փորձագետի հետ:

– Պարոն Օուեն, Դուք ի՞նչ սկզբունքով եք գնացել ընտրական տեղամասերը. հուզե՞լ են, թե՞ ինքներդ եք ընտրություն կատարել:

– Ես իմ ցանկությամբ ընտրական տեղամասեր եմ գնացել ընտրությունների նախորդ օրը՝ տեսնելու, թե նախադատրաստական ինչ աշխատանքներ են արվել, այսինքն՝ աջակցելու, որ ընտրությունները անցնեն օրենքի շրջանակներում:

– Ի՞նչն եք համարում առավել ծակող, ճչացող բացասական երեւույթն այս ընտրություններում:

– Բուն ընտրությունների օրենքը: Հայաստանում գործող ներկայիս ընտրական օրենքը խիստ դժվար է կիրառել: Կան երեք ցուցանիշ-չափանիշներ՝ ընտրական ցուցակներ, քվեատուփերի մեջ առկա քվեաթերթիկների թիվ եւ կտրոնների թիվ: Քվեաթերթիկները հաշվում են համայնքային՝ տեղական հանձնաժողովի մակարդակով, իսկ կտրոնները՝ այլ մակարդակով: Այն բոլոր վերջնական թվերը, որ դետք է հաշվի առնվեն արձանագրությունները կազմելու համար, չափազանց մեծ են՝ տասնմեկ թիվ: Եթե որեւէ երկիր կիրառեր այս օրենքը, անկասկած մեծ դժվարությունների կհանդիպեր:

– Բայց եւ այնդես, մեր գործող օրենքն այսօր սա է՝ լավ թե վատ: Կոնկրետ ընտրությունների վերաբերյալ ի՞նչ կասեք:

– Ես ափսոսում եմ, որ նախագահական թեկնածուների մի մասը հանդես եկավ հայտարարությամբ, թե ընտրություններն ազատ եւ արդար համարվել չեն կարող: Դատավորի իրավասությունների մեջ մտնող իրավունք է դա:

– Այս ընտրություններում ի՞նչն եք համարում առավել դրականը:

– Իմ տղավորությունն է, որ ընտրական տեղամասերում ընդգրկված մարդիկ բարեխղճորեն կատարեցին իրենց դժվար աշխատանքը: Այստեղ ուզում եմ հղում անել ԵԱՀԿ-ի՝ հավանաբար դեռեւս շատ չտարածված զեկույցին, որ ընտրական տեղամասերի 85 տոկոսում ընտրությունները անցել են նորմալ: Իմ կարծիքով, ԵԱՀԿ-ի դիտորդական խմբի ներկայացրած զեկույցում բացասականը շատ է: Այսօր (19.03) առավոտյան Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանատունը տարածել է մի տեքստ, որում խոսվում է այդ մասին:

– Ժողովրդի ակտիվությունն ինչպե՞ս եք գնահատում:

– Քանի որ ես դիտորդ չեմ, այլ փորձագետ, ուղղակիորեն չեմ մասնակցել ընտրություններին: Բայց, որքան ինձ հայտնի է, ժողովուրդը մեծ ակտիվություն է ցուցաբերել, եւ դա շատ դրական դետք է գնահատել:

– Այս ամբողջ գործընթացում Դուք ժողովրդավարության ծիլեր նկատո՞ւմ եք Հայաստանի համար:

– Անշուշտ: Այդ հարցում Հայաստանի նկատմամբ ես խիստ լավատես եմ:

– Դուք առաջին անգամ չեք Հայաստանում, բավականին ափումներ եք ունեցել մարդկանց հետ: Ինչ տղավորություն ունեք մեր երկրից, ժողովրդից:

– Հրաշալի տղավորություններ: Հյուրասեր, բարի մարդիկ են հայերը: Այստեղ այնքան լավ եմ զգում, որ որոշել եմ... ամուսնանալ սիրածս կնոջ հետ:

– Քանի որ քաղաքական-հրադարձությունների այս քոհուքոհում Դուք անձնական երջանկություն գտաք, Ձեզ ուրանց երջանկություն եմք մաղթում:

– Շնորհակալություն:

Զեղագրույցը վարեց
ՌՈՒԲԵՆ ԳԵՎՈՐՅԱՆԸ

Բեռնար Օուենը եւ իր ընթերակա Մարիա Ռոդրիգեսը երեկ երիտասարդական դալատի նորադսակների տրահում գրանցեցին իրենց ամուսնությունը

Հայաստանը մասնակցում է ռասայական խտրականության դեմ միջոցառումներին

Այսօր Ժնեւում աշխատանքները կավարտի մարտի 2-ին մեկնարկած ռասայական խտրականության հարցերով զբաղվող կոմիտեի 52-րդ նստաշրջանը, որ անցկացվում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների ժնեւյան գրասենյակի ազգություններ-ի դալատում: Ի թիվս 12 երկրների, նստաշրջանին մասնակցում է նաեւ Հայաստանի դատվիրակությունը, որը գլխավորում է ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերդությունների բաժնի տնօրեն Ա. Մելիք-Շահնազարյանը:

Ինչդես մեզ հայտնում են ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հասարակական տեղեկատվության բաժնից, «բոլոր տեսակի ռասայական խտրականություններից ազատազատման միջազգային կոնվենցիային», որ ստորագրվել է 1969-ին ՄԱԿ-ի անդամ 150 երկրների կողմից, Հայաստանը միացել է 1993-ին: Ըստ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի, անդամ-դետությունները հաշվետու են կոմիտեին դատահրավական եւ այլ բնագավառներում կատարված խախտումների համար, եւ դարտավոր են վերանայել իրենց քաղաքականությունն այս ոլորտում կամ չեղյալ հայտարարել ռասայական գերակայություն կամ բնանամբ հրահրող օրենսդրությունը, արգելել դրան հանգեցնող միջոցառումներն ու նմանատիդ կազմակերդությունների գործունեությունը:

18 անդամներից կազմված խորհուրդը հետեւում է անդամ-երկրների դարտավորությունների կատարմանը, քննարկում դարբերաբար ներկայացվող զեկույցները: Նստաշրջաններին դետությունները ներկայանում են ամբողջական զեկույցներով: Այս անգամ Հայաստանի զեկույցը լսվեց մարտի 12-13-ին: Դատվիրակությունը վերադարձից հետո կհանդիպի լրագրողներին:

Ա. Գ.

digitised by A.R.A.R.@

հասարակություն

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Վերարտադրողական առողջությունը պիտի լինի յուրաքանչյուր անձի եւ պետության ուշադրության ներքո

Հակաբեղմնավորիչ միջոցներն՝ անվճար

Մարդու վերարտադրողական եւ սեքսուալ առողջության իրավունքները ներգրավվում են մարդու միջազգայնորեն ճանաչված իրավունքների շրջանակում: Կանխապես որոշարկված այլ իրավունքներին (մասնավորապես կյանքի եւ գոյատեւման, ազատության եւ անձնական անվտանգության, հավասարության, կրթության, զարգացման, առողջության բարձրագույն մակարդակի) զուգահեռ շատ երկրներ փոփոխություններ են մտցնում բնակչության զարգացման իրենց ռազմավարության մեջ, առավել ընդգծելով անհատական պահանջմունքներն ու իրավունքները:

Անձի ազատության եւ անվտանգության իրավունքը նախատեսում է սերունդը շարունակելու առթիվ ինքնուրույն որոշումներ կայացնել, վարել եւ վերահսկել սեփական սեռային կյանքը, վերարտադրությունը: Առողջության բարձրագույն մակարդակի իրավունքը նշանակում է բարձրակարգ բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորություն, ներառյալ վերարտադրողական եւ սեքսուալ առողջության հետ կապված ծառայությունները, առողջության համար վտանգավոր գործունեությունից պաշտպանվելը, ինչպես նաեւ խորհրդատվություն եւ օբյեկտիվ տեղեկություններ ստանալը, որպեսզի հնարավոր լինի գիտակից որոշումներ կայացնել: Ընտանիքի պլանավորման իրավունքը, որ վերարտադրողական իրավունքների հանգուցային բաղադրամասերից է, ամրագրված է միջազգային հռչակագրերում: Ամուսնության եւ ընտանիք կազմելու իրավունքը երկրներին ու կառավարություններին պարտավորեցնում է ծառայություններ մատուցել՝ կանխարգելելով եւ բուժելով սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, որոնք անպտղության հիմնական պատճառն են համարվում: Համապատասխանաբար բուժելու եւ կանխարգելման աշխատանքներ են անհրաժեշտ մայրական մահացությունը նվազեցնելու համար: ՄԱԿ-ի բնակչության ֆոնդի տվյալներով Հայաստանում մայրական մահացության թիվը (ծննդաբերությունից, հղիության կամ հեծննդյան բարդություններից) 100 հազարից 50-նն է, մանկական մահացությունը 25-ը:

Բնակչության ֆոնդը համապատասխանաբար նոր է սկսել աշխատանքները Հայաստանում: Ընտանիքի պլանավորման ծրագիրը, որ նախաձեռնել է ֆոնդի գրասենյակը, մեծ ընդգրկում ունի՝ սկսած ուսուցման ծրագրերից մինչեւ բուժպատսարկում, որոնք ուղղված են բոլոր տարիքի մարդկանց դեռահասներից սկսած:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության եւ ՄԱԿ-ի բնակչության ֆոնդի ջանքերով բարձրակարգ վերապատրաստության դասընթացներ անցած 194 մասնագետներ հանրապետության մի շարք հիվանդանոցներում եւ պոլիկլինիկաներում ստեղծված ընտանիքի պլանավորման կաբինետներում (դրանց վրա անպայմանորեն փակցված են համապատասխան ցուցանակները) սեռային առողջության անվճար խորհրդատվություն եւ ծառայություններ են մատուցում: Ծրագրի առաջին փուլում (800 հազ. դոլար արժողությամբ) Հայաստանում մատչելի դարձան հակաբեղմնավորման տարատեսակ նոր միջոցներ, որոնք անվճար տրվում են հաճախորդներին: Հայաստանում ընտանիքի պլանավորման գործընթացը, անցանկալի հղիությունը հաճախակի, ավելի ստույգ՝ մեծամասամբ, լուծում է ստանում վիրահատական միջամտությամբ: Սա ոչ միայն ձեւավորվող օրգանիզմի նկատմամբ մահվան դատավճիռ է, որ դատապարտում է եկեղեցին, այլեւ սոսկալի վնասում է կնոջ առողջությունը: 1993 թ. տվյալներով հայ կանանց 63 տոկոսն առնվազն մեկ անգամ արհեստական վիժում է կատարել, 6 տոկոսը՝ 10 անգամ եւ ավելի: Նույնիսկ Աֆրիկայում նման բան չկա: Արհեստական միջամտության հետեւանքով երեւանում բնակվող կանանց 21,4 տոկոսի մոտ առկա է երկրորդական չբերություն, այսինքն՝ նրանք հաջորդ երեխային այլեւս չեն կարող լույս աշխարհ բերել:

Բնակչության ֆոնդի գրասենյակից մեզ տեղեկացնում են, որ հանրապետությունն է բերվել նորագույն հակաբեղմնավորման միջոցների ամենամիչը 2 տարվա պաշար: Ներկայումս սկսվել է ծրագրի երկրորդ փուլը, 279 հազար դոլար արժողությամբ, որի ընթացքում նմանապես մատչելի կդարձվեն համապատասխան որակի դեղարանները, այդ թվում 4578 կգ պահպանակներ: Այս միջոցները կօգնեն հայ կանանց ոչ միայն զուգընկերոջ հետ, այլեւ առանց նրա գիտության խուսափել առողջությունը քայքայող բուժայցերից:

1994 թ. բնակչության եւ զարգացման միջազգային կոնֆերանսի մշակած գործողությունների ծրագրում նշված սկզբունքներից մեկը հետեւյալն է. «Յուրաքանչյուր աշխարհում ավելանում է նաեւ այս իրավունքների պաշտպանության շուրջ անհանգստության խնդիրը, եւ ավելի շատ թվով երկրներ են սկսում իրենց ազգային օրենսդրության մեջ ներմուծել վերարտադրողական եւ սեռային առողջության իրավունքների դրույթներ: Բայց անգամ այս ամենով հանդերձ չափազանց սահմանափակ է տեղեկատվությունը, թե ինչպես է օրենքը պաշտպանում նման իրավունքները: Իրավական բարեփոխումներին զուգահեռ շատ երկրներ փոփոխություններ են մտցնում բնակչության զարգացման իրենց ռազմավարության մեջ, առավել ընդգծելով անհատական պահանջմունքներն ու իրավունքները:

Անձի ազատության եւ անվտանգության իրավունքը նախատեսում է սերունդը շարունակելու առթիվ ինքնուրույն որոշումներ կայացնել, վարել եւ վերահսկել սեփական սեռային կյանքը, վերարտադրությունը: Առողջության բարձրագույն մակարդակի իրավունքը նշանակում է բարձրակարգ բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորություն, ներառյալ վերարտադրողական եւ սեքսուալ առողջության հետ կապված ծառայությունները, առողջության համար վտանգավոր գործունեությունից պաշտպանվելը, ինչպես նաեւ խորհրդատվություն եւ օբյեկտիվ տեղեկություններ ստանալը, որպեսզի հնարավոր լինի գիտակից որոշումներ կայացնել: Ընտանիքի պլանավորման իրավունքը, որ վերարտադրողական իրավունքների հանգուցային բաղադրամասերից է, ամրագրված է միջազգային հռչակագրերում: Ամուսնության եւ ընտանիք կազմելու իրավունքը երկրներին ու կառավարություններին պարտավորեցնում է ծառայություններ մատուցել՝ կանխարգելելով եւ բուժելով սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, որոնք անպտղության հիմնական պատճառն են համարվում: Համապատասխանաբար բուժելու եւ կանխարգելման աշխատանքներ են անհրաժեշտ մայրական մահացությունը նվազեցնելու համար: ՄԱԿ-ի բնակչության ֆոնդի տվյալներով Հայաստանում մայրական մահացության թիվը (ծննդաբերությունից, հղիության կամ հետծննդյան բարդություններից) 100 հազարից 50-նն է, մանկական մահացությունը՝ 25-ը:

Բնակչության ֆոնդը համապատասխանաբար նոր է սկսել աշխատանքները Հայաստանում: Ընտանիքի պլանավորման ծրագիրը, որ նախաձեռնել է ֆոնդի գրասենյակը, մեծ ընդգրկում ունի՝ սկսած ուսուցման ծրագրերից մինչեւ բուժպատսարկում, որոնք ուղղված են բոլոր տարիքի մարդկանց դեռահասներից սկսած:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության եւ ՄԱԿ-ի բնակչության ֆոնդի ջանքերով բարձրակարգ վերապատրաստության դասընթացներ անցած 194 մասնագետներ հանրապետության մի շարք հիվանդանոցներում եւ պոլիկլինիկաներում ստեղծված ընտանիքի պլանավորման կաբինետներում (դրանց վրա անպայմանորեն փակցված են համապատասխան ցուցանակները) սեռային առողջության անվճար խորհրդատվություն եւ ծառայություններ են մատուցում: Ծրագրի առաջին փուլում (800 հազ. դոլար արժողությամբ) Հայաստանում մատչելի դարձան հակաբեղմնավորման տարատեսակ նոր միջոցներ, որոնք անվճար տրվում են հաճախորդներին: Հայաստանում ընտանիքի պլանավորման գործընթացը, անցանկալի հղիությունը հաճախակի, ավելի ստույգ՝ մեծամասամբ, լուծում է ստանում վիրահատական միջամտությամբ: Սա ոչ միայն ձեւավորվող օրգանիզմի նկատմամբ մահվան դատավճիռ է, որ դատապարտում է եկեղեցին, այլեւ սոսկալի վնասում է կնոջ առողջությունը: 1993 թ. տվյալներով հայ կանանց 63 տոկոսն առնվազն մեկ անգամ արհեստական վիժում է կատարել, 6 տոկոսը՝ 10 անգամ եւ ավելի: Նույնիսկ Աֆրիկայում նման բան չկա: Արհեստական միջամտության հետեւանքով երեւանում բնակվող կանանց 21,4 տոկոսի մոտ առկա է երկրորդական չբերություն, այսինքն՝ նրանք հաջորդ երեխային այլեւս չեն կարող լույս աշխարհ բերել:

Բնակչության ֆոնդի գրասենյակից մեզ տեղեկացնում են, որ հանրապետությունն է բերվել նորագույն հակաբեղմնավորման միջոցների ամենամիչը 2 տարվա պաշար: Ներկայումս սկսվել է ծրագրի երկրորդ փուլը, 279 հազար դոլար արժողությամբ, որի ընթացքում նմանապես մատչելի դարձվեն համապատասխան որակի դեղարանները, այդ թվում 4578 կգ պահպանակներ: Այս միջոցները կօգնեն հայ կանանց ոչ միայն զուգընկերոջ հետ, այլեւ առանց նրա գիտության խուսափել առողջությունը քայքայող բուժայցերից:

1994 թ. բնակչության եւ զարգացման միջազգային կոնֆերանսի մշակած գործողությունների ծրագրում նշված սկզբունքներից մեկը հետեւյալն է. «Յուրաքանչյուր մարդ ունի ֆիզիկական եւ հոգեւոր կատարյալ առողջության իրավունք: Հարկ է, որ պետությունները ձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները բժշկական ծառայություններից օգտվելու հարցում հասանելիություն տրամադրելու կանանց հավասարությունը, ներառյալ այն ծառայությունները, որ վերաբերում են վերարտադրողական առողջությանը: Այս շրջանակում պետք է ապահովվի ծառայությունների լայն սպեկտր»: Մեր հանրապետությունում առողջապահության ներկա անմխիթար իրավիճակը միայն ցանկալի է դարձնում ծրագրային այս մոտեցումը: Բայց ընտանիքի պլանավորման կաբինետները ինչ-որ չափով կարող են բացը լրացնել:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

Ազգին օրինավոր սերունդ է պետք

Մանուկները ժիր խաղեր են սիրում, անհոգ մանկություն են երազում, ուզում են, որ ծնողների ուշադրությամբ ու ջերմությամբ, սիրով ու գորովանքով շրջապատված լինեն: Շատերն ապրում են բարեկեցիկ, ապահով կյանքով, ոմանք էլ (որ այնքան էլ քիչ չեն) կորցրած մանկություն ու երջանկություն, ծնողների ուշադրությունից ու հոգածությունից զուրկ, շրջում են փողոցներում, ընկերանում իրենց նման թափառաշրջիկներին ու դառնում են մուրացկաններ, փող մուրում անցորդներից՝ մետրոներում ու կանգառներում, տրանսպորտում ու շուկաներում: Երբեմն նրանցից ոմանք անուշադրության մատնվելով կամ պարսավանքի ենթարկվելով, ավելի «նպաստավոր» պայմաններ են փնտրում ու սկսում են գողություններ կատարել այսօր գոյությունը պահպանելու համար, որը վաղը դառնում է սովորույթ, ապա հիմնավորվելով, վերածվում «մասնագիտության»:

Նուբարաշենի հատուկ դպրոցական-արական սեռի 70 դեռահասները թափառիկ կյանք վարող, մուրացկանությամբ զբաղվող ու նաեւ գողություններ կատարող երեխաներ են, որոնց հայտնաբերել են ՆԳ նախարարության անչափահասների դպրոցական տեսչության ընդունիչ-բաշխիչ կայանի աշխատակիցներն ու ՀՀ կրթության եւ գիտության նախարարության նախադպրոցական եւ արտադպրոցական հատուկ կրթության վարչության ուղեգրով ուղարկվել են այս հաստատությունում սովորելու եւ վերադաստիարակվելու:

Նրանց ճակատագրերը միանման են՝ հարազատների կողմից մատնված անտարբերության ու անուշադրության, տարբեր են միայն նրանց ընտանեկան իրավիճակները՝ անառողջ մթնոլորտ, հոր կամ մոր կողմից լքված ընտանիք, նյութական ծանր կացություն, վատառողջ, անկարող, հարբեցող, բարոյազուրկ ծնողներ, իսկ արդյունքում՝ կյանքի խմահածույթներից հալածված ու փողոց նետված երեխա, շեղված ճանապարհ, հարազատների ու մտերիմների անտարբերություն: Պետական ու հասարակական հենքի բացակայության դեպքում՝ առկա կործանվող ճակատագիր:

«Սովորում էի Քանաքեռի գիշերօթիկ դպրոցի 3-րդ դասարանում, հայրս մահացած էր, մենք հինգ երեխա ենք, պատմում է 5-րդ դասարանցի Արտյոմ Հակոբյանը, ընկերոջս հետ դասից փախանք: Եկա տուն, մայրս ասաց՝ օթառ չկա լվացք անեմ, ուտելու բան չունենք, գնա մի բան գողացիր, բեր՝ ուտենք: Ես գնացի, տուկանալ» շարադրության մեջ, Հովհաննես Հարությունյանը գրել էր. «Ես ուզում եմ դառնալ իրավաբան, որ շատ փող աշխատեմ, օգնեմ մայրիկիս ու քույրիկիս, որ սոված չմնան, քույրիկիս համար նոր կոշիկներ կառնեմ, որ էլ իր ծակված կոշիկները չհագնի՝ ջուր քաշի, ծնռանը ոտքերը մրսեն...»:

Էդգար Գրիգորյան. «Ուզում եմ դառնալ երգիչ, բանաստեղծություններ եմ գրում մայրիկիս մասին ու մեր հայրենիքի: Ուզում եմ միշտ երգեմ, որ բոլորի տրամադրությունը բարձրացնեմ...»:



Մարտին Վարդանյանը գեղեցիկ, կարկաչուն ձայն ունի, հրաբալի կատարում է ֆիդայական երգեր, մենք նրա երգը լսեցինք, իսկ շարադրությունն այսպիսին էր. «Ես սովորում եմ Նուբարաշենի հատուկ դպրոցական-արական դպրոցում, ուզում եմ դառնալ երգիչ ու զինվոր: Բոլորն ասում են, որ լավ ձայն ունեմ: Մեծանամ, փող աշխատեմ, անպայման կիթառ եմ առնելու, որ ես էլ Ռուբեն Հախվերդյանի նման կիթառով նվագեմ ու երգեմ: Էլ փողոցում չեմ երգի, որ փող տան, հիմա կամաչեմ: Որոշել եմ դառնալ դեսանտ զինվոր ու երգիչ: Բանակում ընկերներիս համար ամեն օր կերգեմ»:

Սպորտային դահլիճում արեւելյան մարգածեւի պարապմունքի ավարտից հետո, մեզ մոտեցավ սեւորակ-խոշոր աչքերով ինձ ծանոթ թվացող մի տղա, ժպտալով ու ամոթխած ասաց. «Դուք մեր դասարանցի Մեսախյայի մայրիկն եք, չէ՞»: Անմիջապես հիշեցի: Արթուրը պատմեց, որ մայրը ուրիշի հետ է ամուսնացել ու տանից հեռացել է, հայրը գաղութում է իրեն խնամող տատիկի մահից հետո մնացել է փողոցում, հետո իրեն այստեղ են բերել... ապա խնդրեց մեզ մի քիչ սպասել: Քիչ անց, վազքով հեւասպառ, բերեց մի նամակ ու խնդրեց, որ հանձնեմ իր ուսուցչուհուն. «Իմ շատ սիրելի ուսուցչուհի ընկեր Ղազարյան ջան, ես ձեզ շատ եմ կարոտել, մեր դասարանցի բոլոր ընկերներիս էլ եմ շատ կարոտել, ուզում եմ գալ, նորից նրանց հետ սովորել, բայց ընկեր Մուրադյանը չի թողնում: Պապաս, որ բանից ազատվի գա, կասեմ, որ ինձ նորից բերի մեր դպրոցը: Ես բոլորիդ էլ համբուրում եմ, ձեզ էլ եմ համբուրում ընկեր Ղազարյան ջան, դուք ինձ շատ էիք սիրում, չէ՞»:

Ձեր աշակերտ Արթուր Հովսեփյան»:

1960-ական թվականներից գործող հատուկ դպրոցն իր գործունեության ընթացքում ունեցել է հատուկ ծրագիր՝ կրթել, վերադաստիարակել ընտանիքի ուշադրությունից դուրս մնացած երեխաներին: Արտադասարանական տարբեր խմբակների գոյությունը՝ փայտամշակման, մետաղամշակման, կարուձեւի, կոշկակարի, նրանց դասընթացներին զուգահեռ մասնագիտություն սովորեցնելը, հետագայում զբաղմունք ու աշխատանք ունենալու միտում ունի: Հանրակրթական դպրոցների ծրագրով գործող այս հաստատությունում ուսումնական պրոցեսն անցկացվում է կաբինետային համակարգով: Ամառային արձակուրդներին դպրոցում գործող ճամբարում իրենց հանգիստն են անցկացնում նրանք, իսկ դպրոցի փոքրիկ օժանդակ տնտեսությունում՝ բանջարանոցում ու այգում, զբաղվում են հողագործությամբ, որի բերքն ու բարիքն էլ վայելում են իրենք: Դպրոցի բազմամյա տնօրեն Ժորա Մուրադյանն իր աշխատանքային տասնութ տարիների ընթացքում մտահոգված է եղել նրանց ճակատագրով, ինչպես նաեւ խորհրդատվություն եւ օբյեկտիվ տեղեկություններ ստանալը, որպեսզի հնարավոր լինի գիտակից որոշումներ կայացնել: Ընտանիքի պլանավորման իրավունքը, որ վերարտադրողական իրավունքների հանգուցային բաղադրամասերից է, ամրագրված է միջազգային հռչակագրերում: Ամուսնության եւ ընտանիք կազմելու իրավունքը երկրներին ու կառավարություններին պարտավորեցնում է ծառայություններ մատուցել՝ կանխարգելելով եւ բուժելով սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, որոնք անպտղության հիմնական պատճառն են համարվում: Համապատասխանաբար բուժելու եւ կանխարգելման աշխատանքներ են անհրաժեշտ մայրական մահացությունը նվազեցնելու համար: ՄԱԿ-ի բնակչության ֆոնդի տվյալներով Հայաստանում մայրական մահացության թիվը (ծննդաբերությունից, հղիության կամ հետծննդյան բարդություններից) 100 հազարից 50-նն է, մանկական մահացությունը՝ 25-ը:

Բնակչության ֆոնդը համապատասխանաբար նոր է սկսել աշխատանքները Հայաստանում: Ընտանիքի պլանավորման ծրագիրը, որ նախաձեռնել է ֆոնդի գրասենյակը, մեծ ընդգրկում ունի՝ սկսած ուսուցման ծրագրերից մինչեւ բուժպատսարկում, որոնք ուղղված են բոլոր տարիքի մարդկանց դեռահասներից սկսած:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության եւ ՄԱԿ-ի բնակչության ֆոնդի ջանքերով բարձրակարգ վերապատրաստության դասընթացներ անցած 194 մասնագետներ հանրապետության մի շարք հիվանդանոցներում եւ պոլիկլինիկաներում ստեղծված ընտանիքի պլանավորման կաբինետներում (դրանց վրա անպայմանորեն փակցված են համապատասխան ցուցանակները) սեռային առողջության անվճար խորհրդատվություն եւ ծառայություններ են մատուցում: Ծրագրի առաջին փուլում (800 հազ. դոլար արժողությամբ) Հայաստանում մատչելի դարձան հակաբեղմնավորման տարատեսակ նոր միջոցներ, որոնք անվճար տրվում են հաճախորդներին: Հայաստանում ընտանիքի պլանավորման գործընթացը, անցանկալի հղիությունը հաճախակի, ավելի ստույգ՝ մեծամասամբ, լուծում է ստանում վիրահատական միջամտությամբ: Սա ոչ միայն ձեւավորվող օրգանիզմի նկատմամբ մահվան դատավճիռ է, որ դատապարտում է եկեղեցին, այլեւ սոսկալի վնասում է կնոջ առողջությունը: 1993 թ. տվյալներով հայ կանանց 63 տոկոսն առնվազն մեկ անգամ արհեստական վիժում է կատարել, 6 տոկոսը՝ 10 անգամ եւ ավելի: Նույնիսկ Աֆրիկայում նման բան չկա: Արհեստական միջամտության հետեւանքով երեւանում բնակվող կանանց 21,4 տոկոսի մոտ առկա է երկրորդական չբերություն, այսինքն՝ նրանք հաջորդ երեխային այլեւս չեն կարող լույս աշխարհ բերել:

Բնակչության ֆոնդի գրասենյակից մեզ տեղեկացնում են, որ հանրապետությունն է բերվել նորագույն հակաբեղմնավորման միջոցների ամենամիչը 2 տարվա պաշար: Ներկայումս սկսվել է ծրագրի երկրորդ փուլը, 279 հազար դոլար արժողությամբ, որի ընթացքում նմանապես մատչելի դարձվեն համապատասխան որակի դեղարանները, այդ թվում 4578 կգ պահպանակներ: Այս միջոցները կօգնեն հայ կանանց ոչ միայն զուգընկերոջ հետ, այլեւ առանց նրա գիտության խուսափել առողջությունը քայքայող բուժայցերից:

1994 թ. բնակչության եւ զարգացման միջազգային կոնֆերանսի մշակած գործողությունների ծրագրում նշված սկզբունքներից մեկը հետեւյալն է. «Յուրաքանչյուր մարդ ունի ֆիզիկական եւ հոգեւոր կատարյալ առողջության իրավունք: Հարկ է, որ պետությունները ձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները բժշկական ծառայություններից օգտվելու հարցում հասանելիություն տրամադրելու տղամարդկանց եւ կանանց հավասարությունը, ներառյալ այն ծառայությունները, որ վերաբերում են վերարտադրողական առողջությանը: Այս շրջանակում պետք է ապահովվի ծառայությունների լայն սպեկտր»: Մեր հանրապետությունում առողջապահության ներկա անմխիթար իրավիճակը միայն ցանկալի է դարձնում ծրագրային այս մոտեցումը: Բայց ընտանիքի պլանավորման կաբինետները ինչ-որ չափով կարող են բացը լրացնել:

ԳՈՌԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

տարածաշրջան

Բանակի եւ կառավարության դիմակայությունը Թուրքիայում

Վերջին օրերին Թուրքիայի մայրաքաղաքում լարված մթնոլորտ է, որը բացատրվում է Ազգային անվտանգության խորհրդի առաջիկա նիստում ռազմական նոր հեղաշրջման վտանգի առկայությամբ:

Ինչպես հայտնի է, մարտի 17-ին թուրքական զինվորականությունը խորհրդակցել է նախագահ Սուլեյման Դեմիրելի հետ՝ ենթարկելով նաեւ վարչապետ Մեսութ Յըլմազի պաշտոնանկության հարցը: Միաժամանակ վարչապետը «Մայր հայրենիք» կուսակցության պատգամավորական միավորման դռնփակ նիստում հայտնել է, թե մարտի 27-ին կայանալիք Ազգային անվտանգության խորհրդի նիստում որեւէ մեկը չի կարող բռնի ուժով պարտադրել իր կամքը եւ պարտադրանքի դեպքում միայն ինքն է, որ կարող է ճնշում բանեցնել զինվորականների վրա: Վարչապետը շեշտել է, թե ահաբեկչության կամ հեսադիմության դեմ պայքարը պետության խաղաղականությունն է եւ զինվորականությունն իրավունք չունի միջամտելու:

Ի պատասխան, մարտի 18-ին բանակի հրամանատարությունն ընդգծել է, թե Թուրքիայի ափխարհիկ սկզբունքների երաշխավորը բանակն է: Նույն օրը մի խումբ պատգամավորներ առաջարկել են ենթել բանակի կողմից կառավարության վրա բանեցվող ճնշումների հարցը իսլամական արմատականության դեմ պայքարի համատեքստում: «ԵՐԵՎԱՆ»

Ադրբեջանի խորհրդարանում չնախատեսված երեւույթ

18 ՄԱՐՏ, BBC: Հեյդար Ալիեւի գլխավորած «Նոր Ադրբեջան» կուսակցության, նաեւ Ադրբեջանի խորհրդարանի Միլի մեջլիսի անդամներ Ամիֆ Շահբազովը եւ Մահիր Ասադովը, որոնք մինչ այդ հասարակությանը քիչ հայտնի էին, միանգամից դարձան հռչակավոր, երբ հայտարարեցին, թե դուրս են գալիս կառավարող կուսակցության շարքերից եւ միանում են ընդդիմությանը: Իշխանությունները վախենալով, որ նախագահական ընտրություններից առաջ Շահբազովի եւ Ասադովի օրինակը կարող է վարակիչ լինել, տեղերում կազմակերպում են ափխասավորական կոլեկտիվների ժողովներ, որտեղ պահանջ է դրվում խորհրդարանից հետ կանչել այդ պատգամավորներին: Այդ ամենը մի քանի օր շարունակ հեռարձակվում էր Ադրբեջանի պետական հեռուստատեսությամբ: Իսկ ընդդիմադիր մամուլը պնդում է հակառակը. ընտրողները հանրահավաքներ են անցկացնում ի պաշտպանություն իրենց ընտրյալների իրավունքների: Խնդիրն այն է, սակայն, որ ըստ անկախ իրավաբանների, Ադրբեջանի ներկա սահմանադրությունում նախատեսված չէ պատգամավորների հետկանչ: Կառավարող կուսակցության բաժնի վարիչ Աղաբեկ Ասլյարովը համարում է, որ վերը նշված պատգամավորներն իրենք պետք է հանձնեն մանդատները. «Այդ երկու պատգամավորներն արդեն կորցրել են իրենց ընտրողների վստահությունը: Հնարավոր է, որ գոյություն չունի հետկանչի մեխանիզմ: Սակայն իրավաբանականից բացի կա նաեւ հարցի բարոյական կողմը», ասում է Ասլյարովը: Տեղի դիտորդները, նաեւ «Սոնիտոր» շաբաթաթերթի խմբագիր Էլմար Հուսեյնովը, կարծում են, որ այս ամբողջ աղմուկի պատճառն այն է, որ նախագահական ընտրություններից առաջ սեփական շարքերում կանխվեն հետագա խմորումները:

ԲԱԼԿԱՆՆԵՐ

Ալբանացիների բազմահազարանոց ցույցեր Կոսովոյում

ԲԵԼԳՐԱԴ, 19 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կոսովոյի մի շարք քաղաքներում վերջին ալբանացիների բազմահազարանոց ցույցեր են տեղի ունեցել «ընդդեմ սերբական բռնացման, հանուն խաղաղության եւ երկրամասի անկախության» կարգախոսներով: Ալբանիայի դրոշներ կրող ցուցարարները քարկոծել են ոստիկանությանը, վնասել Սերբիայի ներքին գործերի նախարարության մի քանի ծառայողական մեքենաներ, փշրել խանութների ցուցափեղկերը: Նրանք ցրվել են միայն այն բանից հետո, երբ ոստիկանությունը նախազգուշացրել է, որ չարտոնված ցույցերն անօրինական են: Ինչպես հաղորդում է ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ը, Կոսովոյի քաղաքական կուսակցությունների ղեկավարներն այդ կերպ են պատասխանել Պրիշտինում գտնվող սերբական պատվիրակության բանակցություններ սկսելու հերթական կոչին:

ԱՄՆ-ի զորքերը Բոսնիայում կմնան «անորոշ երկար ժամանակ»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 19 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ամերիկյան զորքերը Բոսնիայում կմնան անորոշ երկար ժամանակ, ինչը կենսականորեն անհրաժեշտ է Դեյթոնի համաձայնագրերի պայմանները լրիվ ծավալով իրագործելու համար: Կոնգրեսին այդպիսի փաստաթղթեր են ներկայացրել ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթը եւ պաշտպանության նախարար Ուիլյամ Քոհենը: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հաղորդման, նրանք լրացուցիչ 2,5 միլիարդ դոլար են պահանջել ՆԱՏՕ-ի բազմազգ ուժերի կազմում ամերիկացի զինվորների բալկանյան առաքելությունը դրամավորելու համար, որը պետք է ավարտվեր այս տարվա հունիսին:

Վենեսուելայի նախագահը ձգում է գոտին



Նկատի ունենալով երկրի եկամուտների գլխավոր աղբյուրի՝ նավթի գների անկումը, Վենեսուելայի 82-ամյա նախագահ Ռաֆայել Կալդերան նախարարներին կարգադրել է ձգել գոտիները եւ 10 տոկոսով կրճատել իրենց ռոճիկները: Չգտնելով անձամբ օրինակ ծառայել, նախագահն իջեցրեց իր աշխատավարձը, որն այժմ կազմում է մոտ 1700 դոլար:

«ԷՔՍՊՐԵՍ»

Կկամենա՞ք աղրել հնարավորինս մեկուսացած

Ապագայի մեր տունը կկառուցվի նոր տեխնոլոգիաներին եւ նոր նյութերին համապատասխան՝ կատարելով նոր գործառույթներ, այնպիսիք, որ դրական զգացողություններ են առաջացնում: Արեւային էներգիայի օգտագործումը, ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար հարմարեցված լվացարանները, բարելավված ձայնամեկուսացումը, նոր կապի գծերի անցկացումը մանկական խաղեր են այն ամենի համեմատ, ինչ առաջարկում են ճարտարագետները: Նրանք արդեն պատրաստել են ծրագրերի մի ողջ շարք: Այսպես, օրինակ, սենյակում լույսը վառվում է ավտոմատ՝ մտնելուն պես: Սակայն ոչ այն ժամանակ, երբ պարզապես ուզում եք ստուգել ինչպես է ճաշը երեխան: Երաժշտությունը ձեզ «հետեւում» է բնակարանով մեկ, բայց եթե ուզում եք մեկուսանալ եւ հեռաձայնել, «հեռանում» է: Նոր տեխնոլոգիաները թափանցում են մեր կենցաղ, բայց որքանով դրանք դյուրությամբ կիրառվեն, չգիտի խախտեն մեր սովորությունները: Սոցիոլոգներն անվստահությամբ են վերաբերվում դրանց: Նոր սովորույթները գլխավորապես ձեւավորվում են ափխասանքի եւ հանգստի ընթացքում, եւ միայն դրանից հետո կարելի է ստուգել, որ առավել բարդ տեխնոլոգիաները կկիրառվեն առօրյայում: Ֆրանսիացի մասնագետները համեմատելով ավտոմոբիլաշինության եւ կենցաղային կիրառման միեւնույն ժամանակ ստեղծված նորույթների ցանկը, հանգել են մարդկանց պահպանողականության մասին անմխիթար եզրակացության:

Է՞լ ինչ են հնարել ճարտարագետները: Տնային փոքրածավալ լողավազաններ: Կամ՝ ստերեոձայնով ոչ մեծ տեսադահլիճներ. ֆիլմը հեռակառավարումով լիցքավորելուց հետո տեղափոխվում է մեծ հզորությամբ ցանց: Եվ այս ամենը Ինտերնետի ու տեղեկատվական ուղիների շնորհիվ: Ներկայումս ավելի շատ մարդիկ են հնարավորություն ստանում օգտվելու կապի միջոցներից: Կանխատեսումների համաձայն, ապագայում սպասվում է հեռուստաափխասանքի բուռն զարգացում (ափխասանքի տանը՝ հաշվիչ տեխնիկայի միջոցով): Սա իր հերթին հանգեցնելու է բնակելի եւ ափխասանքային առանձին տարածքների ստեղծմանը:

Ապագայում մենք շատ ժամանակ

ենք անցկացնելու տանը: Սա ինչու հարկավոր է վերասարքավորել բնակարանը՝ հարմարեցնելով նոր պահանջներին: Տունը պիտի դառնա յուրօրինակ կոմուտացիոն տարածություն արտաքին ափխարհի եւ ներսի միջեւ: Ճածկած պատշգամբները, շարժական ջերմոցները, որ եկել են փոխարինելու 50-ականների կրկնատակիներին, արդեն նեղացրել են այդ սահմանը՝ կատարելով յուրօրինակ բուֆերի դեր:

Ներքին հարդարանքն իր հերթին պիտի լինի բազմագործառույթ եւ ազատորեն փոփոխվող: Մետաղե ճոպաններով (կաբել) սարքավորված տունը կհավաքվի ստանդարտ մասնիկներից: Արդեն բազմաթիվ տեխնիկական առաջարկներ են գրանցված, օրինակ՝ ջեռուցվող ծածկը կամ փոխադրվող լվացարանները: Իսկ այնպիսի ծառայություն, ինչպիսին պատվերն է հեռուստացույցով, հնարավոր է պահանջի տանը ստեղծել հատուկ մեկուսի անկյուն՝ պահախցիկներով եւ հատատուն ջերմությամբ գոտիներով:

Այս ամենին զուգահեռ հնարավոր չէ անտեսել նաեւ շրջակա միջավայրի պահպանության հարցերը: Ապագայում թափոնները՝ թուղթ, ապակի, մետաղ, պլաստմասսա, կտեսակավորվեն: Յուրաքանչյուր տան տեր արդեն այսօր մասնակցություն է ունենում աղբի առաջնային մշակման գործում: Գիտենք նաեւ, որ շարունակում են նվազել երկրագնդի ջրային պաշարները, ուստի այսօրվանից իսկ ձեռնարկվում են տնտեսման միջոցներ: Օրինակ, պետքարանների դատարկվող ջրանոթների ծավալը 15 լիտրից իջեցվել է 7-ի, եւ հետագայում էլ ավելի կփոքրացվի:

Չի կորչի նաեւ անձրեւաջուրը, որ տեղում կհավաքվի եւ կմաքրվի: Մշտապես կմանրէազերծվի օդը, հատակի եւ պատերի ծածկերը կպատրաստվեն հակաալերգիկ նյութերից: Օդափոխիչ սարքի միջոցով անցնող օդը, որ ընդունակ է հիվանդություններ հարուցել, նույնպես կմաքրվի: Այժմ արդեն գոյություն ունեն հատուկ ծածկեր, որ մանրէներին պահում են կախյալ վիճակում:

Ասենք՝ ամենաբարդ մեր տունը կվերածվի հիվանդություններից, աղեներից, տեխնոլոգիական վտանգներից ապաստանի, որ անխուսափելիորեն կհանգեցնի մարդկանցից մեկուսանալուն: Այնպես որ, այժմ անհրաժեշտ է պարզել, կիրառուի՞ կացարանի նման ֆուտուրիստական պատկերը սպառողին:

Ա. Ա.

THERE ARE MANY ROADS TO SUCCESS...

HERE ARE 57 OF THEM

And the "road map" you need is the FREE ICS Career Kit–the same Career Kit we've sent to millions of men and women all over the world. It works–and it can work for you.

ICS doesn't promise you success; no legitimate educational institution does. But we DO promise that, if you mail or fax this ad to us, we'll send you the Career Kit in the career area of your choice, without obligation, and get you started down the career road of your choice... the road that leads to success and a better life.

Please select one number only. Although you may wish to enroll in additional ICS programs later on, experience has shown that there is a far better chance for success when the student concentrates on one career area.

SEND FOR FREE FACTS – NO OBLIGATION

ICS LEARNING SYSTEMS

International Correspondence Schools, Dept. W9T48
Box 1900, Scranton, Pennsylvania 18501-1900 U.S.A.
Fax: 717-343-8462

http://www.icslearn.com

World's Recognized Leader in Home-Study Training for More Than 100 Years.

ASSOCIATE IN SPECIALIZED BUSINESS DEGREE PROGRAMS
60 Business Management
61 Accounting
80 Business Management with option in Marketing
81 Business Management with option in Finance
64 Applied Computer Science
68 Hospitality Management

ASSOCIATE IN SPECIALIZED TECHNOLOGY DEGREE PROGRAMS
67 Electronics Engineering Tech.
63 Civil Engineering Tech.
62 Mechanical Engineering Tech.
65 Electrical Engineering Tech.
66 Industrial Engineering Tech.

CAREER DIPLOMA PROGRAMS
07 U.S. High School Diploma
02 Electronics
05 Hotel/Restaurant Management
13 Professional Secretary
35 Travel Agent
14 Air Conditioning&Refrigeration
32 Art
59 Catering/Gourmet Cooking
23 Medical Office Assistant
24 Dental Office Assistant
51 Fashion Merchandising
33 Motorcycle Repair
52 Surveying&Mapping
22 Wildlife/Forestry Conservation
47 Animal Care Specialist
89 Small Engine Repair
08 Legal Assistant
48 Computer-Assistant Bookkeeping
42 Dressmaking&Design
87 TV/VCR Repair
04 Auto Mechanics
12 Interior Decorating
18 Bookkeeping
06 Electrician
03 Child Day Care
38 PC Specialist
55 Diesel Mechanics
94 Fitness&Nutrition
85 Drafting
41 Journalism/Short Story Writing
40 Photography
70 Computer-Assisted Small Business Mgmt.
79 Electronics Technician
25 Gun Pro
26 Teacher Aide
30 Floral Design
27 PC Repair
15 Home Inspector
39 Medical Transcriptionist
72 Appliance Repair
58 Private Investigation
76 Freelance Writer
84 Pharmacy Technician

COMPUTER PROGRAMMING
01 Programming in BASIC
37 Visual Basic
36 Visual C++

Get FREE Information
MAIL OR FAX ENTIRE AD TODAY
Write the number of the one career that interests you_____

MR/MRS/MISS_____ AGE_____
(Please print clearly)
ADDRESS_____ POSTAL CODE_____
CITY/COUNTRY_____ PHONE_____

ICS ACCREDITATIONS AND APPROVALS

ICS is an accredited member of the Distance Education and Training Council in Washington, D. C. and is licensed by the Pennsylvania State Board of Private Licensed Schools.
ICS Learning Systems has been reviewed and approved as a Certified Provider of continuing education and training programs by the International Association for Continuing Education and Training.

IACET

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Խիզախ ու հայրենասեր գրողը

Սուրեն Մուրադյանը իր գրչակից ընկերոջ մասին

Հրայր Քոչարը «Խորհրդային գրականություն» ամսագրի խմբագիրն էր: Մեր կուրսում էր սովորում ֆուրդ բանաստեղծ Միխայելե Ռաֆիդը: Մենք մտերիմ ընկերներ էինք, ապրում էինք հանրակացարանի նույն սենյակում: Քոչարն արտակարգ ջերմ էր Ռաֆիդի հանդեպ, մի քանի անգամ էլ նրա բանաստեղծությունները տպագրել էր իր խմբագրած հանդեսում: Քոչարը 1934 թ. խմբագրել էր «Ոյա բազա» թերթը եւ մեծ հարգանք ուներ ֆուրդ մտավորականության հանդեպ:

Ռաֆիդի խորհրդով իմ բանաստեղծություններից ընտրեցի մի փունջ եւ գնացինք Քոչարի մոտ: Ռաֆիդը ինձ ծանոթացրեց Քոչարի հետ, որն աչքի անցկացրեց իմ բանաստեղծությունները եւ խոստացավ երկուսը տպագրել ամսագրի առաջիկա համարներից մեմտակված: Ո՞ր շրջանից ես:

– Ալավերդու շրջանի Ակներ գյուղից:

– Եղել եմ ձեր գյուղում, Սանահինի մոտ է, բանաստեղծական բնություն ունի: Այդ բնության մեջ ծնված բանաստեղծը պիտի լավ գրի: Արձակ չե՞ս փորձել:

– Պիես եմ գրել:

– Պիես գրելու համար կյանքի մեծ փորձ է պետք: Առայժմ խորհուրդ կտամ բանաստեղծություններ գրես: Ուժերդ փորձիր նաեւ արձակում: Հիասքանչ անտառներ ունեք, լեռներ, ձորեր, դրանք սփռված բանաստեղծական պատկերներ են: Ճիշտ է, Թումանյանն անզուգական է պատկերել Լոռին, բայց ամեն բանաստեղծ իր աչքերով պիտի իմաստավորի տեսակը:

Թոռուցիկ այդ հանդիպումը գրական ուսանելի դաս եղավ:

1954 թ. մարտի 1: Գրողների տանը հավաքվել էին երգիծանքի գիտակներն ու երկրպագուները եւ ննջարկում էին «ոգսր» ասասգրի լուսալսասյաս հարցը:

Առաջինը խոսք ասաց Հրայր Քոչարը՝ «Ոգնու» անդրանիկ խմբագիրը: Ես արդեն ասացի, որ Քոչարը հռետորական խոսքի անզուգական վարպետ էր, բայց այդ օրը նա փայլեց ժողովրդական մտածողության, կենդանի երգիծանքի նրբերանգներին տիրապետելու խոր իմացությամբ: Նրան լսում էին հիացմունքով, զվարթ դեմքերով, ակնարկիս: Նա բառացիորեն լողում էր երգիծական տարբեր ժանրի ստեղծագործությունների ծովում, մեկը մյուսի հետեւից դիպուկ ու զվարճալի օրինակներ բերում Պարոնյանից, Օշյանից, Պեշիկթաշլյանից, բանահյուսությունից: Կանգ առավ Լեո Կամսարի երգիծական նովելների վրա, որոնք լիաթոք ծիծաղ առաջացրին դահլիճում:

Լույս տեսավ «Ոգնու» առաջին համարը:

Երեւանում, Հայաստանի բոլոր շրջաններում մի իսկական մշակութային տոն էր, բոլորի խոսակցության նյութը «Ոգնին» էր: Մարդիկ տարիներ շարունակ սուր երգիծական խոսք չէին լսել, կարոտ էին զվարթ, շիտակ, սրամիտ գործերի:

Քոչարը կարողացավ կարճ ժամանակում ժողովրդին զվարթացնել, զգաստացնել: «Ոգնին» ձեռքից-ձեռք էր անցնում, հիմնարկներում, դպրոցներում, համալսարանում, տրանսպորտում, խանութներում, ընտանիքներում, ամենուրեք «Ոգնին» տարածեց իր երգիծական ուժեղ թեւերը:

Հիշում եմ, մի ուրիշ անգամ կուսակցական ժողովում Ցական Շողենցը մեղադրեց Հրայր Հովհաննիսյանին, որ Իոսիֆ Բրոդ Տիտոյին բանաստեղծություն է նվիրել: Այն ժամանակներն էին, երբ Տիտոյի եւ Ստալինի բարեկամությունը խզվել էր: Նույնիսկ Ստալինյան մրցանակի ներկայացրած Նիկոլայ Տիխոնովի՝ Հարավսլավիային նվիրված բանաստեղծական շարքը Ստալինի առաջարկով հանվեց մրցույթից:

Եվ ահա այս տխուր փաստերի արձագանքը հասավ նաեւ Երեւան:

Շողենցի «մեղադրանքից» հետո խոսք խնդրեց Քոչարը:

– Ես առաջարկում եմ Ցականի հարցը քննել, ոչ թե Հրայրայի: Պարզվում է, որ Ցականը տարիներ առաջ իմացել է, որ Տիտոն դավաճանելու է մեր երկրին եւ գաղտնի է պահել բոլորից, Հրայր Հովհաննիսյանին էլ չի զգուշացրել, որ բանաստեղծություն չգրի:

– Ինչպե՞ս թե, դա զրպարտություն է, ես չեմ իմացել, Քոչարը զրպարտում է ինձ, տեղից պոռթկաց Շողենցը:

Բոլորը ծիծաղեցին, իսկ Քոչարի սրամիտ ելույթը վերջակետ դրեց Շողենցի մեղադրանքին:

1958 թ. հոկտեմբերի 20: Գրողների միության կուսակազմակերպության հաշվետու-ընտրական ժողովում Քոչարն ասաց.

– Ըստ հայտնի աֆորիզմի՝ երիտասարդները կարծում են, թե աշխարհն իրենցով է սկսվում, իսկ հայրերը կարծում են, թե աշխարհն իրենցով է վերջանում: Ես կարծում եմ, չափից ավելի Մասիս երգելը նսեմացնում է հարցի լրջությունը, եւ եթե առիթ լինի՝ այդ անունը չափից շատ ծամարակողները չեն կռվի հանուն Մասիսի ազատագրման:

1959 թ. սեպտեմբերի 26: Կուսժողովում ննջարկվում էին գրական երիտասարդության դասընթացների հարցերը:

Աղասի Վարդանյանն առաջարկեց, որ կուսբյուրոն մշակի կոնկրետ միջոցներ, որպեսզի Հովհաննես Շիրազն իր ազդեցության տակ չգցի երիտասարդներին:

Հրայր Քոչարն իրեն հատուկ հումորով առարկեց.

– Վարդանյանի առաջարկն անընդունելի է: Ծիծաղելի է Շիրազին մեղադրել, որ երիտասարդներին իր ազդեցության տակ է գցում: Իսկ ինչո՞ւ այդ երիտասարդները Շիրազից չեն սովորում լավ գրել: Մեզնից ոչ մեկը հաջություն չի ցուցաբերում այս կամ այն աղաշնորհ երիտասարդ գրողին ասելու, թե «լավ կլիներ դու զբաղվես ավելի հանրօգուտ աշխատանքով, քանզի գրող չի դուրս գա»:

Իր մահվան նախորդ տարին ամենաբեղմնավորը եղավ Քոչարի կյանքում: Նա կարծես զգում էր մոտալուտ մահը եւ շտապում էր ասել վերջին խոսքը: Հասցրեց գրել «Սպիտակ գիրքը», «Կարոտը», «Նահատակը», «Մայրենի լեզու» շարքը: Սակայն չհասցրեց ամեն ինչ ասել, շատ սպիտակ էջեր մնացին անավարտ, որոնք պետք է գարդարվեին գրողի նոր գործերով:

Քոչարը առաջին հայ գրողն էր, որը շրջագայեց երկաթե վարագույրից այն կողմ, սփյուռքահայության մեջ, ջերմ հանդիպումներ ունեցավ ամենատարբեր շրջանակների հետ եւ ուր եղավ, հպարտորեն պատմեց իր ժողովրդի ու հայրենիքի մասին:

Վերադարձից հետո նա երեք ժամ շարունակ գրողների տանը եւ այլուր լեփլեցուն դահլիճներում պատմում էր իր շրջագայության մասին: Պատմում էր հետաքրքիր դեպքերով շաղախված հարուստ տպավորությունները, փոխանցում սփյուռքահայերի թեժ կարոտն ու սերը:

Քոչարի կյանքն ու ստեղծագործությունը անձնականի ու հասարակականի, խոսքի ու գործի ներդաշնակության ուսանելի օրինակ է:

Նրա ռազմաճակատային օրագիրը, Մեծ հայրենականի օրերից ծնված ակնարկները, «Արքազան ուխտն» ու «Գեներալի քույրը» նովելները, «Մեծ տան զավակները» վեպը, նրա անմահ հուշարձանը՝ «Սպիտակ գիրքը», արտացոլում են հայրենասեր գրողի ու խիզախ խաղաղասեր պայծառ կերպարը:

ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Նաիրի Զարյանը, Հրայր Քոչարը եւ Դերենիկ Դեմիրճյանը

ԵՐԵՎԱՆ

Նվիրատվությունների ցուցահանդեսը Ազգային պատկերասրահում

Հայաստանի ազգային պատկերասրահում բացվել է «Հոգու շնորհներ» նվիրատվությունների ցուցահանդեսը, ուր վերջին ութ տարիներին պատկերասրահին նվիրված արվեստի գործեր են ներկայացված: Մեր պատկերասրահը հարուստ է հայկական, ռուսական եւ արեւմտաեվրոպական արվեստի նմուշներով (շուրջ 20 հազար), որոնց մեջ մեծ թիվ են կազմում նվիրատվությունները: Հետեւաբար ոչ պատահական եւ հետաքրքիր է նվիրատվությունների հիման վրա բացված հայ կերպարվեստի եւ քանդակի այս ցուցադրությունը: Շատ նկարներ հեղինակներն անձամբ են նվիրել (Հ. Հակոբյան, Գառզու, Ասատուր Ժանսեմ), մյուսները ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իրանում, Մոսկվայում բնակվող մեր հայրենակիցների նվիրատվություններն են անձնական հավաքածուներից: Ցուցադրված էին Հակոբ Գյուրջյանի քանդակները, որոնք նվիրել է ժնեւաբնակ Չամբերթեն ընտանիքը, Այվազովսկու նկարները, որոնց մեջ էր նաեւ «Պետերբուրգի տեսարան» կտավը, որն Անդրանիկ Շահինյանի նվերն էր Գորբաչովին, Հակոբ Հովնաթանյանի գծանկարները, Էդգար Շահինի նկարները, ինչպես նաեւ Համբարձում Գալստյանի, Կարիկ Պասմաճյանի նվիրատվությունները եւ հայ նկարչության այլ գործեր:



Չափազանց դժվար է հարազատ եւ սեփական դարձած արվեստի նմուշներից բաժանվելը, եւ միայն մեծ սիրտ եւ խիզախ հոգիներ ունեցողներն են դրանցից բաժանվում համազգային սեփականություն դարձնելու նպատակով նվիրատվություն կատարելով: Հայաստանի իշխանությունները պարտավոր են ամեն ինչ անել ազգային պատկերասրահի պայմանները գոնե բարելավելու, մեր ազգային արժեքները պահպանելու, նաեւ վստահություն ներշնչելու համար: Նվիրատուները պետք է համոզված լինեն, որ չեն սխալվել եւ արվեստի այդ գործերը արժանի տեղ են հանգրվանել:

Ա. Ա.

ԿՈՐՅՈ

Վախճանվեց բանաստեղծ Կայծակ Լեփեճյանը

Փարիզի «Յառաջ» օրաթերթը գուժում է մահը բանաստեղծ Կայծակ Լեփեճյանի, որը տեղի է ունեցել փետրվարի 20-ին, Լոս Անջելեսում:

Ծնվել է Դորբ Յոլում, 1921-ին: Նախակրթությունը ստացել է Ալեքսանդրեթի Նուբարյան վարժարանում, որն ավարտելուց հետո 1935-ին փոխադրվել է Կիպրոս եւ ուսումը շարունակել Սելգոնյան կրթական հաստատությունում: Աշակերտելով Վահե Վահյանին, նրա իսկ քաջալերությամբ պատանեկան տարիքից սկսում է բանաստեղծություններ գրել: Այնուհետեւ 1942-ին Ամման տեղափոխվելով, վարել է հայկական վարժարանի տնօրենի պաշտոնը, միաժամանակ շարունակելով ստեղծագործել եւ դասավանդել: 1947-ին իր նորակազմ ընտանիքով ներգաղթել է Հայաստան, երազելով տպագրության հանձնել իր «Տաղեր սիրոյ եւ մորմոքի» հատորը: Հայաստանում վարել է գրադարանի վարիչի պաշտոնը, տասը տարի շարունակ ընտրվել խաղաղապահության պատգամավոր: Իր գրածը տպելու երազանքը երկար ժամանակ անիրականանալի մնալուց հետո, 1980-ին Վահե Վահյանի ջանքերով դառնում է իրականություն Բեյրութում: Հատորն արժանանում է ԹՍՄ Հայկաբեն Ուզունյան գրական մրցանակի, որից ոգեւորված բանաստեղծությունների մի նոր գիրք է գրում, որն այս անգամ «Տաղարան» խորագրով Երեւանում լույս է տեսնում 1987-ին:

Հաջորդ տարին Լեփեճյանը փոխադրվում է Լոս Անջելես՝ միանալու իր զավակներին: 1991-ին հրատարակում է իր «Քնարական մտորումներ» բանաստեղծությունների եւ «Անթվակիր օրագրություն» պատմվածքների հատորները, որոնցից առաջինը դարձյալ արժանանում է ԹՍՄ Հայկաբեն Ուզունյան գրական մրցանակի:

Հարգանք իր հիշատակին:

Հ. Ե.

Հայտարարություն

Սիրելի հայրենակիցներ, սիրված երգիչ Ռուբեն Հախվերդյանի հետ հանդիպման հնարավորություն են ընձեռում Երկրապահ կամավորականների միությունը, ՀԱՅՄԵՆ SHOW, «Հույս-Վարդան» բարեգործական հիմնադրամը, «Պարադիզ» ընկերությունը, Աֆղանստանի պատերազմի վետերանների միությունը, եւ մարտի 27-ին հրավիրում «Արամ Խաչատրյան» համերգային մեծ դահլիճ մասնակցելու արցախյան գոյամարտի 10-ամյակին եւ այդ պայքարում նահատակվածների սուրբ հիշատակին նվիրված Ռուբեն Հախվերդյանի բարեգործական համերգին:

Ձեր մասնակցությամբ դուք մարդասիրական մի քայլ կկատարեք, քանի որ համերգը բարեգործական է, եւ ողջ հասույթը տրվելու է զոհված ազատամարտիկների միայնակ մայրերին:

Համերգին մասնակցում է նաեւ դերասան-երգիչ Միխայել Պողոսյանը:

Սկիզբը ժամը 18-ին:

Տոմսեր կարող եք ձեռք բերել նույն համերգասրահի եւ Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի տոմսարկղերից:

digitised by A.R.A.R.@

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

«Մենք զիջեցինք Եվրոպայի լավագույն թիմին»

Չեմպիոնների լիգայի 1/4 փուլի պատասխան խաղերը

«Դինամո» (Ուկրաինա)-«Յուվենթուս» (Իտալիա) խաղը սառը ցնցուղ էր կիեւցիների մեծաթիվ աջակիցների համար: Ի դեմ, նրանց թվում էին նաեւ հանրապետության առաջին դեմքերը: Դինամոյականներն իրենց համար բարենպաստ արդյունքի հույս ունեին պատասխան մրցամարտից առաջ: Հիշեցնենք, որ Թուրինում կայացած առաջին հանդիպման ժամանակ ոչ-ոքի (1-1) էր գրանցվել: Կիեւի հանրապետական մարզադաշտում եւս երկար ժամանակ մոտավորապես հավասար խաղ էր գնում: Սակայն, երբ առաջին խաղակեսի միջնամասում դաշտի տերերի թիմի առանցքային ֆուտբոլիստ Յուրի Կալիտվինցեւը վնասվածք ստացավ եւ թողեց խաղադաշտը, ինչ-որ բան նրանց գործողություններում խախտվեց:

29-րդ րոպեին Զինեդին Զիդանը սրընթաց մուտք գործեց մրցակցի տուգանային հրապարակ, գնդակը փոխանցեց Ֆիլիպո Ինզագիին, որը խփեց առաջին գոլը: Երկրորդ խաղակեսի սկզբին (54-րդ րոպեին) Կալիտվինցեւին փոխարինած Վասիլի Կարբիշի հեռահար հարվածը «Յուվենթուսի» դարպասապահ Անջելո Պերուցցին ետ մղեց, սակայն վրա հասած Սերգեյ Ռեբրովը երկրորդ հարվածով հավասարեցրեց հաշիվը: Թվաց, թե կիեւցիների խաղը կարգավորվում է, սակայն շուտով կրկին իտալացիները տիրեցին նախաձեռնությանը: Զգացվում էր (հատկապես 2-րդ խաղակեսում), որ «Յուվենթուսն» ավելի բարձր մակարդակի թիմ է, քան «Դինամոն»: Ինզագին եւս երկու գոլ խփեց (65-րդ եւ 73-րդ րոպեներին), իսկ խաղավարտից 1 րոպե առաջ Ալեսանդրո դել Պիերոն վերջակետ դրեց 1-4:

Այսպիսով, Կիեւի «Դինամոն», որն անցյալ տարի եվրոպական խաղադաշտերում ունեցած իր հիանալի ելույթներով շատերին էր զարմացրել, այս անգամ անհաջողության մատնվեց եւ դուրս մնաց Չեմպիոնների լիգայի խաղարկությունից: Սակայն կարծում ենք, որ երիտասարդ թիմն ու նրա փորձառու մարզիչները հետագայում դեռ կհասնեն խոշոր հաջողություններ: Խաղից հետո «Դինամոյի» գլխավոր մարզիչ Վալերի Լոբանովսկին ասաց. «Ես ողբերգություն չեմ սարքի մեր պարտությունից, քանի որ մենք զիջեցինք Եվրոպայի լավագույն թիմին»:

Անգլիական «Մանչեսթր Յունայթեդն» ու նրա երկրպագուները լավատեսորեն էին տրամադրված Ֆրանսիայի չեմպիոն «Մոնակոյի» հետ հանդիպումից առաջ, քանի որ երկու շաբաթ առաջ Մոնտե Կառլոյում անցկացված խաղը 0-0 հաշվով էր ավարտվել: Դաշտի տերերի հնարավորություններն ավելի բարձր էին գնահատում նաեւ մասնագետները, լրագրողները: Սակայն պատասխան հանդիպումն այնպես չընթացավ, ինչպես հույս ունեին անգլիացիները: Առաջին խաղակեսում հյուրերի թիմի լավագույն հարձակվողներից մեկը Դավիդ Տրեզեգեն (նա առաջին խաղին չէր մասնակցել վնասվածքի պատճառով) գրավեց «Մանչեսթրի» դարպասը: Անգլիացի ֆուտբոլիստները շատ ջանքեր թափեցին հաղթանակի համար, սակայն առավելագույնը, ինչին նրանք հասան, հաշիվը հավասարեցնելն էր: Պատասխան գոլը խփեց Օլե-Գունար Սոլսկյաերը: 1-1 հաշվով ոչ-ոքին ծեռնտու էր «Մոնակոյի» համար: Թիմը, շնորհիվ մրցակցի դաշտում խփած գոլի, հաջորդ փուլ դուրս եկավ:

«Ռեալ» (Իսպանիա)-«Բայեր» (Գերմանիա) հանդիպման միայն առաջին խաղակեսում հյուրերը կարողացան դիմադրություն ցույց տալ մրցակիցներին: Այն, որ հաշիվը չբացվեց, դարպասապահ Դիրկ Հայնեսի շնորհիվ էր: Երկրորդում Իսպանիայի ֆուտբոլիստները երեք անպատասխան գոլ խփեցին Լեւերկուզենի թիմի դարպասը: Առաջինը, 49-րդ րոպեին, հաջողության հասավ ֆրանսիացի լեգեոնական Քրիստիան Կարեմբյուն, արդեն 8 րոպե անց հաշիվը կրկնապատկեց Ֆեռնանդո Մորիենտեսը, իսկ խաղավերջում, ծեռով խաղալու համար նշանակված 11 մետրանոց տուգանային հարվածը հստակորեն իրացրեց Ֆեռնանդո Յերոն: Մադրիդի «Ռեալը» հաղթեց 3-0 հաշվով եւ մտավ կիսաեզրափակիչ: Հիշեցնենք, որ առաջին խաղում 1-1 հաշիվ էր գրանցվել:

Գերմանական երկու թիմերի Դորտմունդի «Բորուսիայի» եւ Մյունխենի «Բավարիայի» երկրորդ հանդիպումը նույնպես, ինչպես 0-0 հաշվով ավարտված առաջինը, զգույշ, ոչ այնքան դիտարժան էր: Գոլային պահեր շատ քիչ առաջացան, եւ պարզ էր, որ խաղի ելքը միակ գոլը կորոշի: Այդպես էլ եղավ: Հանդիպման հիմնական ժամանակը 0-0 հաշվով ավարտվելուց հետո լրացուցիչ ժամանակ նշանակվեց: Եվ միայն 109-րդ րոպեին դաշտի տերերի հարձակվող Շվեյցարիայի հավաքականի անդամ Ստեֆան Շաքուիզան գեղեցիկ հարվածով գրավեց բավարացիների դարպասը: Չեմպիոնների լիգայի նախորդ տարվա գավաթակիր «Բորուսիան» խոստացավ եզրափակիչի մասնակից գերմանական երեք թիմերից միակն է, որն իրավունք ստացավ շարունակելու պայքարը:

Երեկ ուշ երեկոյան անցկացվեցին նաեւ Գավաթակիրների գավաթի խաղարկության պատասխան հանդիպումները:

Իսկ այսօր Լոզանում (Շվեյցարիա), ՈՒԵՖԱ-ի շտաբ բնակարանում կանցկացվի եվրոպական երեք գավաթների խաղարկությունների կիսաեզրափակիչ փուլի վիճակահանությունը:



ՈՊ ֆուտբոլի ֆեդերացիան փող չունի

Անփող ֆեդերացիա, անպայմանագիր գլխավոր մարզիչ, պարզեւավճար չստացող ֆուտբոլիստներ... Այսպիսի տխուր վիճակում է հայտնվել Ռուսաստանի ֆուտբոլի հավաքականը, որը մարտի 25-ին Մոսկվայում ընկերական հանդիպում է անցկացնելու Ֆրանսիայի հավաքականի հետ: Քանի որ Ռուսաստանի հավաքականը մուտք չգործեց աշխարհի առաջնության եզրափակիչ փուլ, ֆեդերացիան զրկվեց 3 միլիոն դոլարից, որ նրան վճարում էր հովանավորը վիթխարի «Գազպրոմը»: Այժմ ֆեդերացիան մինչեւ նոր հովանավոր գտնելն պետք է բավարարվի 750000 դոլար տարեկան բյուջեով, որը «հազիվ բավարարում է վճարելու ստաժավորումների եւ ուղեւորությունների ծախսերը», ընդգծում է հավաքականի գլխավոր մարզիչ Բորիս Իգնաշեւը:

Վաս արդյունքների պատճառով հավաքականի մարզիչները փոխվում են գրեթե ամեն տարի: Իգնաշեւը դեռ չի հեռացվել, բայց նա այլեւս պայմանագիր չունի եւ վստահ չէ, թե այն կնորացվի, թեեւ ֆեդերացիայի նախագահ Վյաչեսլավ Կոլոսկովը նրան պատրաստում է թողել մինչեւ Եվրոպայի առաջնության ընտրական խաղերի ավարտը:

Շատերին թվում է, որ ընկերական խաղում Ֆրանսիայի հավաքականից ծանր պարտություն կրելու դեպքում Իգնաշեւը կարող է հեռացվել, քանզի ֆուտբոլիստները նրան առանձնապես չեն սիրում: «Նա թողտվություն է հանդես բերում հավաքականում տիրող անկարգապահության նկատմամբ», հայտարարեց հավաքականի խաղացող, «Սպարտակի» կիսապաշտպան Դմիտրի Ալենիչեւը «Էկիպ» թերթի թղթակցին: Իգնաշեւին հավանաբար կփոխարինի «Զենիթի» ներկայիս մարզիչ Անատոլի Բիշովեցը, որի ղեկավարությամբ Ռուսաստանը օլիմպիական չեմպիոն դարձավ 1988 թ.: Բայց այս փոփոխությունը եւս չի լուծի բոլոր խնդիրները, մանավանդ փողի պակասի խնդիրը:

Վճարման ծգծգումները սովորական երեւույթ են դարձել հավաքականում, իսկ աշխարհի առաջնության ընտրական փուլում չհաստատվեցին ֆուտբոլիստներ Օնոպկոյի եւ Կանչելսկիսի ուղեւորության ծախսերը: Արդյունքն էլ ավելի մռայլ է թվում: Մարտի 23-ին Ֆրանսիայի հավաքականի ժամանման նախօրեին ՈՊ հավաքականի ֆուտբոլիստները պետք է նոր պայմանագրեր ստորագրեն իրենց դաշնային ղեկավարների հետ: Պայմանագրերով նախատեսվում է խաղի պարգեւավճարների նվազեցում, որոնք ամեն դեպքում չեն վճարվի, եթե ՈՊ հավաքականը հաջող հանդես չգա եվրոպայի առաջնության ընտրական փուլում:

Այս տարվա փետրվարի 18-ին Աթենքում Հունաստանի հավաքականի հետ ընկերական խաղում (այն ավարտվեց 1-1 հաշվով) ՈՊ հավաքականի ֆուտբոլիստները արդեն հանդես էին եկել անվճար: Նրանցից շատերը գանգատվում են, որ նույնը կարող է կրկնվել մարտի 25-ին: Ֆուտբոլիստներից ոմանք նույնիսկ մտադիր են թողնել հավաքականը, եթե իրավիճակը չբարելավվի:

Պ. Ք.

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Կմասնակցեն «Ակրոպոլիսի գավաթի» մրցումներին

Հունահռոմեական ոճի ըմբիշներից հետո Հունաստան մեկնեցին նաեւ ազատ ոճի ըմբշամարտի հայաստանի հավաքականի ներկայացուցիչները: Նրանք Հունաստանի հավաքականի հետ համատեղ ուսումնամարզական հավաք կանցկացնեն Աթենքում: Դրանից հետո մեր մարզիկները հանդես կգան «Ակրոպոլիսի գավաթ» միջազգային խոշոր մրցումներում, որոնք կանցկացվեն մարտի 28-29-ին: Այս ավանդական մրցաշարը սովորաբար շատ ուժեղ կազմ է հավաքում: Այն, իհարկե, ուժերի հիանալի ստուգատես կլինի մեր ըմբիշների համար:

Ահա թե ինչպիսի կազմով են հանրապետության ազատ ոճայինները մեկնել Հունաստան. 54 կգ քաշային կարգ՝ Արմեն Մկրտչյան (Փոքր Վեդի), Նորայր Գեւորգյան (Արարատ, Քաղցրաշեն), Մարտին Բերբերյան (Երեւան), Արմեն Սիմոնյան (Երեւան), 58 կգ՝ Կարո Սիմոնյան (Երեւան), Անուշավան Սահակյան (Երեւան), 63 կգ՝ Ռոբերտ Խաչատրյան (Երեւան), Արայիկ Բաղդասարյան (Երեւան), 69 կգ՝ Սմբատ Գասպարյան (Աշտարակ), 76 կգ՝ Արայիկ Գեւորգյան (Արարատ, Քաղցրաշեն): Հայաստանի հավաքականի ավագ մարզիչն է Հրանտ Ենոքյանը:

ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՍՊՈՐՏ

Ֆեդերացիայի գավաթի խաղարկությունը

Այսօր կսկսվի ՀՀ հեծանվային սպորտի ֆեդերացիայի գավաթի խաղարկությունը: Մրցումները, որոնց կմասնակցեն հանրապետության ուժեղագույնները, կտեւեն երեք օր:

Առաջին օրը կանցկացվի անհատական լեռնային հեծանվավազք Աբովյան-Չարենցավան 12 կիլոմետր մրցուղով: Այնուհետեւ հեծանվորդները իրենց հարաբերությունները կորոշեն «կրիտերիում» մրցածեւի Չարբախ-Մասիս 50 կիլոմետր երթուղում: Իսկ մրցումների վերջին օրը՝ մարտի 20-ին, կանցկացվի Փարաքար-Արմավիր-Աշտարակ-Եղվարդ-Արզնի-Երեւան հեծանվավազքը: Երրորդ փուլի երկարությունը 120 կմ է:

Ֆեդերացիայի գավաթի խաղարկության արդյունքներով կկազմվի Հայաստանի հավաքականը, որը մայիսի սկզբին կմեկնի Իրան եւ կմասնակցի Թավրիզի միջազգային բազմօրյա հեծանվավազքի մրցումներին:

ՎՈԼԵՅԲՈԼ

Գավաթները գտան տերերին

Հայտնի դարձան եվրագավաթների բոլոր չորս հաղթողները:

Տղամարդկանց Չեմպիոնների լիգայի մրցումներում գավաթը նվաճեց Իտալիայի «Կազա» (Մոդենա) թիմը, որը եզրափակիչում 3-0 հաշվով հաղթեց իսպանական «Ունիկահային» (Ալմերիա): Երրորդ մրցանակակիր դարձավ ֆրանսիական ՊՅՈՒԿ (Փարիզ) թիմը, որը նույն հաշվով առավելության հասավ խորվաթիայի «Մլադոստի» (Զագրեբ) նկատմամբ:

Գավաթակիրների գավաթում եւս ուժեղագույնը իտալացիներն էին: Վերջնական հանդիպման ժամանակ կոնիգի «Ալպիտուրը» 3-0 հաշվով պարտության մատնեց Հունաստանի «Օլիմպիակոսին» (Պիրեյ): 3-րդ եւ 4-րդ տեղերը համապատասխանաբար գրավեցին «Կաստելլո դի Մայա» (Պորտուգալիա) եւ «Գրան Կանարիա» (Իսպանիա) թիմերը:

Կանանց Չեմպիոնների լիգայում գավաթը նվաճեց «Դուբրովնիկը» (Խորվաթիա): Հաջորդ տեղերում են «Վակիֆբանկ» (Թուրքիա), «Ֆոդպաղեդրեսսի» (Իտալիա), «Ռիոմ» (Ֆրանսիա) թիմերը:

Գավաթակիրների գավաթի հաղթող դարձան ԲԿՄԱ (Ռուսաստան) թիմի վոլեյբոլիստուհիները: Նրանք իրենցից հետ թողեցին «Կանն» (Ֆրանսիա), «Վոլլեյ» (Իտալիա), «Բեշիքթաշ» (Թուրքիա) թիմերին:

ԼՈՂ

Հերթական՝ 6-րդ փուլը

Շվեդիայի Մալմյո քաղաքի 25 մետրանոց լողավազանում անցկացվեց աշխարհի գավաթի խաղարկության հերթական՝ 6-րդ փուլը: Տարօրինակ է, բայց այս մրցումներին չմասնակցեցին մարզաձեւում առաջատար դիրքեր գրավող մի շարք երկրների ներկայացուցիչներ:

Գավաթի խաղարկության այս փուլում ավելի քան հաջող հանդես եկան Գերմանիայի ներկայացուցիչները: Քրիստիան Կելլերը եւ Անդի Բուշեսին 3-ական չեմպիոնական կոչում նվաճեցին: Իսկ ազատ ոճի 400 եւ 800 մետր մրցաշարածությունների մեջ իր հավասարը չուներ Յորգ Հոֆմանը:

Նշենք նաեւ բելառուս Իգոր Կոլեդայի (200 մ, ազատ ոճ) եւ ուկրաինուհի Սվետլանա Բոնդարենկոյի (50 մ, բրաս ոճ) հաղթանակները:

Մալմյոյի մրցումներում նաեւ եվրոպայի նոր ռեկորդ գրանցվեց: Դանիացի Մետտի Յակոբսենը (լուսանկարում) կանանց բատերֆլայ ոճի 200 մ մրցաշարածությունն անցավ 2 րոպե 6,74 վայրկյանում՝ գերազանցելով օլիմպիական չեմպիոնուհի Սմիթի (Իռլանդիա) նախկին ռեկորդը:



digitised by A.R.A.R.@

Օրվա հետքով

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մտահոգիչ խնդիրներ, որոնք պետք է լուծվեն մինչև երկրորդ փուլը

ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Ջեյմս Ռուբինի հայտարարությունը

Մարտի 16-ին Հայաստանի բնակիչները նոր նախագահ էին ընտրում: Քվեարկության վերջնական արդյունքները դեռ հայտնի չեն, բայց ամեն ինչ խոսում է այն մասին, որ 12 թեկնածուներից ոչ մեկին չհաջողվեց ձայների մեծամասնություն ստանալ, ուստի եւ մարտի 30-ին տեղի կունենա ընտրությունների երկրորդ փուլը, որին կմասնակցեն ամենաշատ ձայներ ստացած անկուսակցական թեկնածուներ՝ վարչապետ Ռոբերտ Քոչարյանն ու Կարեն Դեմիրճյանը:

ԵԱՀԿ դիտորդական առաքելությունն ընդգրկում էր մոտ 200 միջազգային դիտորդ, այդ թվում մոտ 75 ամերիկացի: Ընտրությունների օրը նրանք այցելեցին Հայաստանի ընտրական տեղամասերի կեսից ավելին: Տեղամասերի 85 տոկոսում դիտորդները լավ կազմակերպված գործընթացի վկա եղան: Սակայն տեղամասերի 15 տոկոսում դիտորդները նկատեցին օրենքի զգալի խախտումներ, որը հարցականի տակ կդներ ընտրությունների արդյունքները, եթե թեկնածուները համարյա նույն թվով ձայներ ստանային: Մենք համաձայն ենք ԵԱՀԿ նախնական զեկույցին, որը մարտի 18-ին հրապարակել է դեսպան Սեմ Բրաունը:

Ընդհանուր առմամբ, քարոզարշավը եղել է ազատ եւ բաց: Բոլոր թեկնածուներին զգալի հնարավորություն է տրվել օգտվելու պետական հեռուստատեսությունից եւ այլ լրատվամիջոցներից: Նրանք կարողացել են իրենց քարոզարշավն իրականացնել առանց լուրջ միջամտությունների: Ընտրատարածքների մեծ մասում քվեարկությունն ընթացել է կանոնավոր:

Սակայն Հայաստանի քաղաքական գործիչները, զանգվածային լրատվության միջոցներն ու միջազգային դիտորդները մի շարք խնդիրներ են նկատել: Հայաստանի ժողովրդավարական ապագայի համար շատ կարեւոր է, որ այդ խնդիրներն արդյունավետ ձեւով լուծվեն մինչեւ երկրորդ փուլի անցկացումը, որպեսզի մարտի 30-ին կայանալիք երկրորդ փուլում ընտրվի ժողովրդավարական լեգիտիմություն ունեցող մի նախագահ, որը կառաջնորդի Հայաստանը:

Մտահոգության առիթ հանդիսացող հիմնական հարցերը, որոնք լուծում են պահանջում երկրորդ փուլից առաջ, հետեւյալն են՝

զինծառայողների ոչ ճիշտ քվեարկություն,

քաղաքացի չհանդիսացող փախստականների եւ Ադրբեջանի բնակիչների քվեարկություն,

պետական միջոցների (ռեսուրսների) չարաշահում,

տեղական իշխանությունների եւ անվտանգության աշխատակիցների միջամտություն,

լրատվության միջոցների կողմնապահություն:

Առաջին փուլում առաջընթաց է նկատվում 1996 թ. սեպտեմբերի նախագահական ընտրությունների համեմատ: Միեւնույն ժամանակ մենք Հայաստանի կառավարությանը կոչ ենք անում հստակ քայլեր ձեռնարկել մինչեւ մարտի 30-ի քվեարկությունը միջազգային դիտորդների կողմից նշված պրոբլեմները լուծելու համար: Մենք եւ միջազգային հանրությունը հուսով ենք, որ մարտի 30-ին կայանալիք երկրորդ փուլը Հայաստանի կառավարության եւ ժողովրդի համար առիթ կլինի ցուցադրելու Հայաստանի անդրադարձվածությունը ժողովրդավարությանը եւ օրենքի իշխանությանը:

Ընտրություններ. Հեռուստատեսությունը դարձյալ խոչընդոտ

ԵՐԵՎԱՆ, 19 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախագահական ընտրությունների առաջին ռաունդն ավարտվեց. առջեւում երկրորդն է: Հայաստանի մամուլը, մասնավորապես պետական լրատվամիջոցներն ինչպե՞ս լուսաբանեցին այն: Երկու օր առաջ Լրատվամիջոցների եվրոպական ինստիտուտի եւ «Ազատություն» ռադիոկայանի ներկայացուցիչները լրագրողների հետ հանդիպման ժամանակ վերապահումներ հայտնեցին ընտրարշավի ընթացքում Հայաստանի մամուլի լուսաբանումների վերաբերյալ: Պարզաբանումների համար Արմենպրեսի թղթակիցը դիմեց Հայաստանի ազգային հեռուստատեսության գործադիր տնօրեն Համլետ Գասպարյանին:

– Պարոն Գասպարյան, ըստ Լրատվամիջոցների եվրոպական ինստիտուտի հայկական գրասենյակի դիտարկումների, հեռուստատեսությունը հավասար հնարավորություններ չի ընձեռել 12 թեկնածուներին: Մասնավորապես, ձեր լրատվական թողարկումներում առավել ուշադրություն եք հատկացրել նրանցից հինգին, առավելագույնը՝ Ռոբերտ Քոչարյանին:

– Դուք գիտեք, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հավասար եթերաժամանակ էր հատկացրել թեկնածուներին 90-ական րոպե անվճար եւ 180-ական րոպե վճարովի եթեր: Իրենք թեկնածուները, դրանք անհավասար օգտագործեցին. մի մասը ծախսեց ողջ ժամանակը, մյուսները՝ մասամբ կամ միայն անվճար եթերը: Այստեղ մենք սոսկ պարզ կատարողներ էինք, օրենքի տառին հետեւողներ: Պետք է թեկնածուների շտաբներին հարցնել, թե ինչու նրանք չկարողացան առավելագույնս օգտագործել իրենց ժամանակը: Իմ կարծիքով, ընտրություններն արագացված էին, եւ թե թեկնածուները, թե լրատվամիջոցները չհասցրին լավագույնս պատրաստվել դրանց, բացվել հասարակության առջեւ: Դիտորդները ճիշտ են նկատում, որ լրատվամիջոցները, ուշադրությունը կենտրոնացնելով թեկնածուների վրա, չօգնեցին հասարակությանը կողմնորոշվել ծրագրերի միջեւ: Սա հեռուստատեսության պարագայում երկու բացատրություն ունի. նախ՝ պարտավորվածություն յուրաքանչյուրին ապահովել հավասար եթերաժամանակ, ապա՝ սրանից բխող երկրորդ հանգամանքը. ազգային հեռուստատեսության օրական 8-ժամանոց հաղորդաշրջանից դա խլում էր 6 ժամը, մեկ ժամ հատկացվում էր «Լրաբեր» լրատվական թողարկմանը, մոտ 40 րոպե «Դեմքեր» ծրագրին, մնացած մասը՝ երաժշտական անցումներին եւ մանկական փոքրիկ ծրագրերին: Ինչպես տեսնում եք, գործնականում անհնարին էր սեփական հաղորդումների մեջ անդրադառնալ թեկնածուների ծրագրերին: Բացի այդ, թեկնածուներն իրենք ուշ հրապարակեցին իրենց նախընտրական ծրագրերը, լրագրողներին ժամանակ չթողնելով ծանոթանալ եւ անդրադառնալ դրանց:

Ինչ վերաբերում է վարչապետ Ռոբերտ Քոչարյանին լրատվական թողարկումներում շատ տեղ հատկացնելուն, դա էլ իր բացատրությունն ունի: Առաջին, որ որպես գործող վարչապետ նա շարունակում էր ղեկավարել կառավարության գործունեությունը հատկապես նախընտրական արշավին նախորդող շաբաթվա ընթացքում, որից հետո դիտարկումներն էին սկսել վերոհիշյալ ինստիտուտի երեւանյան ներկայացուցիչները: Կառավարության գործունեության մասին, որպես լրատվամիջոց, մենք պարտավոր ենք համաժամանակյա տեղեկացնել հասարակությանը: Այլ հարց է, որ դա անուղղակիորեն կարող է նպաստել Քոչարյանի ընտրարշավին: Այս առումով, Հայաստանում այսօր ով էլ լինի իշխանության գլուխ, լրատվամիջոցները նրան առավել ուշադրություն են հատկացնելու: Ընդ որում, ոչ միայն պետական լրատվամիջոցները, այլեւ անկախ: Երկրորդ՝ Քոչարյանի նախընտրական արշավն առավել խիտ էր կազմված, քան մյուսներինը: Թեկնածուներից ոմանք պարզապես խուսափում էին հանրային հանդիպումներից եւ լրագրողներից, մյուսների շտաբները հեռուստատեսությանը սուղ տեղեկություններ էին տրամադրում իրենց թեկնածուի շրջագայությունների վերաբերյալ: Սա, իհարկե, արտահայտիչ կարող է անհավասարության տպավորություն գործել, ինչը դիտավորության հետեւանք չէր, այլ վերոհիշյալ հանգամանքների: Որպես լրագրող, ես հասկանում եմ, որ առավել շատ ուշադրությունը թեկնածուներից մեկի հանդեպ կարող է արջի ծառայություն մատուցել վերջինիս: Սակայն դեմ եմ նաեւ արհեստական հավասարությանը, երբ ստիպված ես այն վերջից պահպանել:

ՀԱՅԱՏՔ ԴՐՍԻՑ

«Դեմիրճյանն ու Մանուկյանը ուզում են օգուտ բաղել անցյալից, իսկ Քոչարյանը՝ ներկայից»

ԲՍՔՈՒ, 19 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ազատություն» ռադիոկայանի աշխատակից Լիզ Ֆուլերը վերջին տարիներին Կովկասում անցկացվող նախագահական ընտրությունների կապակցությամբ հոդվածում գրում է, որ Հյուսիսային Կովկասում եւ Անդրկովկասում ընտրությունների վրա չորս գործոն է ազդում: Այդ գործոններից ոչ մեկը չի կարելի վերագրել Հայաստանում անցկացվող ընտրություններին:

Առաջին գործոնը քաղաքական ճգնաժամն է եւ ներհակությունները, պատերազմից հետո տարածաշրջանում անկայուն խաղաղությունը կորցնելու վախն է եւ տնտեսության ավերվելը: Այդ գործոնը կարեւոր դեր խաղաց Շեւարդնաձեի Վրաստանի նախագահ ընտրվելու գործում, երբ նրա «Վրաստանի քաղաքացիների միությունը» բոլորից շատ քվեներ ստացավ խորհրդարանում:

Երկրորդ գործոնը կապված է տարբերություններից խուսափելու որոշ ընտրողների ձգտման հետ: Տարեց ընտրողները քվեարկում են թվացյալ ուժեղի օգտին: Այդ գործոնը կարեւոր էր Շեւարդնաձեի հաղթանակի համար եւ մեծ դեր խաղաց նախագահ Ալիեւի ընտրվելու ժամանակ: Շատ հավանական է, որ այդ գործոնն ազդակ հանդիսացավ Մասխադովի Չեչնիայի նախագահ ընտրվելու հարցում: Ռուսաստանն այն ժամանակ Մասխադովին համարում էր լավագույն կողմնակիցը բանակցությունների համար, քանի որ նա էր համաձայնագիր ստորագրել անվտանգության խորհրդի այն ժամանակվա քարտուղար Լեբեդի հետ:

Երրորդ գործոնն այն է, որ քվեարկությամբ բողոք հայտնվի գոյություն ունեցող անտանելի պայմանների դեմ: Դա դրսեւորվեց Հայաստանում 1996 թվականի նախագահական ընտրարշավի վերջին շաբաթներին, եւ ընդդիմության ղեկավար Մանուկյանին ժողովրդականություն ապահովեց:

Չորրորդ գործոնը կապված է ընտրություններին տարբեր թեկնածուների կամ կուսակցությունների թույլ չտալու հետ: Օրինակ, 1995 թվականի հուլիսի խորհրդարանական ընտրությունների շեմին Հայաստանի Հանրապետության կառավարությունը մերժեց գրանցել Դաշնակցություն կուսակցությունը: Նույն տարվա նոյեմբերին չթույլատրվեց «Մուսավաթ» կուսակցության թեկնածուների համամասնական մասնակցությունը Ադրբեջանում անցկացվող խորհրդարանական ընտրություններին:

Ֆուլերի կարծիքով, Հայաստանում արտահերթ ընտրությունների սցենարը տարբերվում է տարածաշրջանի նախկին ընտրական սցենարներից: Օրինակ, ընտրարշավի ամենասկզբում շատ դժվար էր խոսել որեւէ մեկի հաղթանակի մասին: Ի լրումն, այդ գործընթացին միացան նոր գործոններ անցյալի կարոտախտը եւ անձի արտերեւույթը: Դեմիրճյանը եւ Մանուկյանն ուզում են օգուտ քաղել անցյալից, մինչդեռ Քոչարյանը՝ ներկայից:

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանությունը հայտարարում է մրցութային ընդունելություն՝

1. դեսպանատան անվտանգության աշխատակցի,

2. ընդունարանի քարտուղարի/դեսպանատան անվտանգության աշխատակցի թափուր տեղերի համար:

Պահանջվում է անգլերենի իմացություն եւ նմանատիպ աշխատանքի փորձ:

Դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն, Բաղրամյան 18, կադրերի բաժին. հեռ. 52-46-61, 52-16-11 մինչեւ մարտի 20-ը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեւանի Արաբկիրի ֆինչական բաժնում ֆինվում է «Երաշխիք» ՍՊԸ գրավատան տնօրեն Հենրիկ Ասատրյանի եւ մյուսների կողմից խաբեությամբ քաղաքացիների ունեցվածքին տիրանալու փաստի առթիվ հարուցված քրեական գործը:

Խնդրվում է նշված գրավատանը 1994-96 թթ. ընթացքում ավանդների տեսքով գումար ներդրած կամ որպես վարկ գումար վերցրած քաղաքացիներին գրավատան հետ ունեցած գործարքներին վերաբերող փաստաթղթերով ներկայանալ Արաբկիրի ֆինչական բաժին (Արաբկիրի շրջանի ներքին գործերի բաժին, Երեւան, Մամիկոնյանց 1 շենք):

Հիշեցնան կարգով հայտնվում է, որ «Երաշխիք» ՍՊԸ գրավատունը գտնվում է Արաբկիրի տարածքում, Երեւան Չարյան 47:

ԱՐԱԲԿԻՐԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Սոֆյա Գրիգորի Մուրադովան կորցրել է պայուսակը, որի մեջ են եղել նաեւ անձնագիրն ու աշխատանքային գրքույկը:

Փաստաթղթերը գտնելու դեպքում խնդրում ենք զանգահարել

64-25-68, 58-18-41:

Կարող եք բերել նաեւ **«Ազգ»** թերթի խմբագրություն

Հանրապետության 47:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սենյականոց բնակարան, Ֆրունզեի փ. շենք 6, 34 բն., 5 հարկանի շենքի 5-րդ հարկում:

Տես.՝ 44-97-40, 58-18-41

(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ):

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սենյականոց բնակարան 115/70 քմ, Չարենցի 52, 3 հարկանի քառ շենքի 2-րդ հարկում:

Հեռ.՝ 55-66-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սենյականոց բնակարան (Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):

Զանգահարել 72-89-83

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

մեկ սենյականոց բն. Նորքի IV զանգվածում, հեռ. **64-88-85, 64-93-89:**

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

2 սենյականոց բնակարան, նկուղով, քաղաքի կենտրոնում:

Զանգահարել 23-56-78

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ – ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) – պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով – մագնիսական սկավառակներով – INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur):

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65 Դասիչ 69149 Պատուեր 785 Տպաքանակը՝ 3500 Ստորագրված է տպագրության՝ 19.03.1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@